

Ռոմիկ Խ. Քոչարյան
Փիլ. գիյր. թեկնածու

**ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԵՐԿՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՌԻՂՂԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՆՈՒՅՆՈՐՈՇՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ
ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՄԵԿՆՈՐՈՇՈՒՄԸ**
Ս. Օգոստինոսի մեկնահայեցակարգում*

Բանալի բառեր – ս. Օգոստինոս, «Սրբազան հերմենևտիկա», Սուրբ Գիրք, իմաստություն, բանահասություն, հասկացում, մեկնորոշում, գիտություն, հայեցակարգ:

Մուտք

Հերմենևտիկան (մեկնագիտություն) կյանքի է կոչվել ամենայնի որպես այդպիսին գոյության իսկությունը հայտող տեսագործական իմաստության հասկացման ու մեկնորոշման կարիքային խնդրակարգով:

Արդ՝ ամենայնի գոյության բուն կոչումն ու ըստ այդմ իսկությունը հայտորոշող իմաստի ու իմաստության խորհրդի հասկացմամբ ու մեկնորոշմամբ իմացահայտ է դառնում իր բնույթով տեսական **ճշմարտությունը**:

Հերմենևտիկան կյանքի է կոչվել նաև իր բնույթով գործնական **բարու** և համակեցության՝ առ բարեկարգություն սիրով ու հոժարական նախընտրությամբ:

Հունական անտիկ ավանդությունում հերմենևտիկայի դիցապատում ու ռացիոնալ նախապատմությունն ու բոլորատեսակ դրսևորումները¹ ներկայանում են որպես «**իսկության հերմենևտիկայի**» պատմական եղելումի սաղմնավորման սկզբունքային նախադրյալների ու ատրիբուտների առկայություն՝ հետագա ժամանակաշրջաններում դրանց առավելաչափ հստակ հայտորոշմամբ²:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 03.09.2021:

1 Հերմենևտիկայի անտիկ շրջանում սկզբնագոյացման մասին տես **Бласс Фр.**, Герменевтика и критика, Одесса, 1891, էջ 1-16, **Шпет Г.**, Герменевтика и ее проблемы, М., «Контекст», 1989, էջ 232-233, **Савреј В. Я.**, Александрийская школа в истории философско-богословской мысли, М., 2010, **Тисельтон Э.**, Герменевтика, Коллоквиум, Черкассы, 2011, էջ 69-84 և այլն:

2 Հերմենևտիկայի հայեցակարգի հունական անտիկ ավանդության իսկության **եռալի** մեկնաբանության հնարավորությունների մասին տես **Քոչարյան Ռ.**, «Իսկության հերմենևտիկայի» կայացման նախադրյալները անտիկ

Քրիստոնեության և՛ սկզբնաշրջանում, և՛ Միջին դարերի բովանդակ ժամանակընթացում ներքին կարիք ու անհրաժեշտություն էր թարգմանել, ձևարտապես հասկանալ ու մեկնաբանել Հին ու Նոր Կտակարանները, աստվածաշունչ ու սրբախոս ամենայն «նուրբ» գրերը և ըստ այդմ մեկնա- հայեցմամբ՝ նաև «արտաքին» գրերն ու հենց իմաստասիրական երկերը: «Հնարավոր է՝ որևէ այլ դարաշրջան այնչափ «հերմենևտիկական» չէ, որ- չափ Միջին դարերը, չնայած որ այն չի ունեցել լայն ճանաչում: Այդ ժամա- նակընթացում միտքը լի էր գիտամեկնությամբ և լուծմունքներով (commentaries) կենսագործված ձևերի լայն տեսականիով, և Սուրբ Գրերը մշտապես մեկնաբանությունների ու վերամեկնաբանությունների կիզա- կետն էին: Եվ այնչափ բազում էին, որ դարաշրջանը կարող է ուսուցանել մեզ **հերմենևտիկայի պրակտիկայի** վերաբերյալ»³:

Աստվածաշունչ մատյանի իմաստության բանահասության (հասկաց- ման) ու մեկնորոշման տեսության և հենց գիտության բացառիկ ու հազ- վագյուտ օրինակներից են Որոգհինեսի ու ս. Օգոստինոս Երանելու երկերը⁴: Սուրբ Գրոց ստույգ իմաստի ու խորհրդի **գիտահասկացման ու գիտա- մեկնության** (էկզեգետիկա) հետ մեկտեղ հարցադրվում ու քննորոշվում էին նաև գիտահասկացման ու մեկնաբանության **իսկության** բացորոշումը որպես իր խնդրակարգն ունեցող **մեկնագիտության (հերմենևտիկա)** բո- վանդակությունը կազմող սկզբունքները, մեթոդները, օրինաչափություն- ներն ու կանոնները⁵: Այդ կերպ իսկ հնարավորվել ու ապահովվել է մեկ- նահայեցակարգի՝ առ գիտություն կայացումը, որով և՛ Սուրբ Գրոց մթին դարձվածքների իմաստների ձշտիմաց բացորոշումն ու բուն նպատակայի- նը՝ Սուրբ Գրոց բովանդակ ասացյալի իմաստին ու իմաստությանը բանա- հասու լինելը⁶:

«Աստվածաշնչյան հերմենևտիկայի»՝ որպես գործնական գիտամեկ- նության ինքնահասկացում ու տեսաբանություն կայացմամբ արդեն «մեկ- նագիտական (հերմենևտիկական) աշխատությունների ստեղծումը նշանա- վորում է Աստվածաշունչ Գրերի ուսումնասիրության, բանահասության (հասկացման) ու մեկնության պրակտիկայի արդեն նաև **տեսականորեն**

շրջանի հերմենևտիկայի դիցապատում և ռացիոնալ նախապատմությունում, «Փիլիսոփայությունը արդի աշխարհ- հում», գիրք VII, գիտաժողովի նյութեր, Եր., 2017, էջ 17-31:

3 **Beusshot M.**, Hermeneutics in medieval thought – The Routledge companion to hermeneutics, ed. by J. Malpas and H.-H. Gander, engl. trans. by J. Tubert-Oklander, Routledge Taylor and Francis Group, London and New York, 2015, p. 23.

4 Տե՛ս **Ориген**, О началах, Новосибирск, 1993, **Августин Блаженный**, Христианская наука, или Основания св. Гермевтики и церковного красноречия, Киев, 1835:

5 Միջնադարյան հերմենևտիկայի (մեկնագիտություն) և գիտամեկնության (էկզեգետիկա) վերաբերյալ տե՛ս նաև **Vessey D.**, Medieval Hermeneutics – The Blackwell Companion to Hermeneutics, ed. by Niall Keane and Chris Lawn, Wiley-Blackwell, A John Wiley & Sons, Ltd., Publication, 2016, էջ 34-44, The Reception and Interpretation of the Bible in Late Antiquity: proceedings of the Montreal colloquium in honour of Charles Kennegiesser, 11-13 October 2006, ed. by Lorenzo DiTommaso & Lucian Turcescu, Brill, Leiden Boston, 2008, **Tomas F. Torrance**, Devine meaning: studies in patristic hermeneutics, T&T Clark Ltd, Edinburg, 1995 և այլն:

6 Տե՛ս **Քոչարյան Ռ.**, Ս. Օգոստինոսի քրիստոնեական վարդապետությունում Սուրբ Գրոց հասկացումն ու մեկ- նությունը՝ շնորհիվ թե՛ գիտություն. (էկզեգետիկայի և հերմենևտիկայի համագոյությունը), «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», գիրք VIII, Եր., «Լիմուշ», 2018, էջ 152-153:

ինքնահասկացման ու գիտականորեն ներկատարելագործման փուլը»⁷: Ուստի «Միջին դարերում հերմենևտիկան սկսեց ձեռք բերել գիտության բնութագծեր: Դա առաջնահերթորեն կապված էր Սուրբ Գրոց տեքստերի մեկնաբանության ընդհանուր կանոնների մշակման անհրաժեշտության հետ: Բացի այդ՝ Միջին դարերում լայնորեն տարածված տեսակետ էր, որ ամենայն իրեր և իրադարձություններ հենց նշաններ են, որոնցով Աստված կամենում է որևէ բան հայտնել մեզ: Ուստի և ամենայն գիտելիք հարկ է դիտարկել որպես հասկացում: Այն առաջանում է մեզ շրջակա նշանների ստույգ մեկնաբանության արդյունքում»⁸:

Ս. Օգոստինոսի հոգևոր-գրամշակութային հարուստ ժառանգության մեջ գերակշռում են մեկնողական բազմատեսակ ժանրերի և նույնիսկ Սուրբ Գրոց մեկնագիտության՝ դասական նշանակության աշխատությունները⁹: Նրա «Քրիստոնեական գիտություն» երկում, որը մասնագիտական գրականության մեջ արդեն իսկ ճանաչում է գտել որպես «գրական-հոետորական և հերմենևտիկական տեսության աննախադեպ աշխատություն»¹⁰, ներկայացված է **միջնադարյան մեկնագիտության կուռ հայեցակարգ**: Միջնադարագիտական մասնագիտական գրականության մեջ ս. Օգոստինոսի **մեկնահայեցակարգը՝** ամբողջապես ու բացորոշ ներկայացված իր այդ աշխատության մեջ և մասնակիորեն ներկայացված ու ներհյուսված նաև իր որոշ մեկնություններում, ուսումնասիրվել է և՛ որպես **մեկնագիտություն** (հերմենևտիկա), և՛ որպես **գիտամեկնություն** (էկզեգետիկա): Նրա մեկնահայեցակարգը, արդարև, առաջնահերթորեն ներկայանում է որպես մեկնագիտություն, այսինքն՝ բանահաստության ու մեկնության ընդհանուր տեսություն: Քանզի իր աշխատության մեջ նա սկզբունքորեն առաջադրում է նպատակային երկու խնդիրների գիտական հարցադրում և ուսումնասիրություն՝ իսկական (ճշմարիտ) իմաստը գտնելու եղանակի, որը և կնշանակի, թե **ինչպես բանահաստ լինել** Սուրբ Գրոց մատյաններում ասացյալին, և ապա՝ այդ իմաստն այլոց հաղորդելու կամ շարադրելու եղանակի, որն էլ կնշանակի, թե **ինչպես մեկնաբանել** ասացյալը՝ այլոց ևս հաղորդ ու ընկալ դարձնելով մեկնողաբար բացորոշվող իմաստին ու իմաստության խորհրդին¹¹: Նրա մեկնահայեցակարգն իմացահայտվելով որպես մեկնագիտություն՝ զուգահեռաբար ներկայանում է

7 Սույն տեղում, էջ 157:

8 Гутнер Г. Б., Философия языка, в 3-х частях, ч. 3, М., Изд. УРАО, 2001, с. 4.

9 Sten Bright P., Augustine and the Ethics of Reading the Bible – The Reception and Interpretation of the Bible in Late Antiquity: proceedings of the Montreal colloquium in honour of Charles Kennengiesser, 11-13 October 2006, ed. by Lorenzo DiTommaso & Lucian Turcescu, Brill, Leiden Boston, 2008, էջ 59: Sten նաև De Doctrina Christiana: A Classic of Western Culture, ed. D.W.H. Arnold and P. Bright, Notre Dame, in University of Notre Dame Press, 1995:

10 Vessey M., Augustine among the Writers of the Church – A companion to Augustine, ed. by M. Vessey with the assistance of Shelley Reid, Wiley-Blackwell, A John Wiley & Sons, Ltd., Publication, 2012, p. 243.

11 Sten Августин Блаженный, նշվ. աշխ., էջ 13: Sten նաև Քոչարյան Ռ., Ս. Օգոստինոսի «Սրբազան Մեկնագիտություն» ուսումնասիրության առաջնային ու գերագույն առարկան (Աստվածաշնչում Հակոբի ու Մանվելի հարցին հրեշտակի պատասխանի իմաստության խորհուրդի քննա-համեմատական մեկնորոշմամբ), «Էքմիաօին», Եր., 2018, ժ, էջ 35-36:

նաև որպես **գիտամեկնություն**¹² մեկնության կիրառական տեսություն, և ըստ այդմ՝ կոնկրետ մեկնություն, քանզի բացորոշվում են Սուրբ Գրոց կիրառական մեկնության ընդհանուր և հատուկ կանոններ ու ամբողջական կանոնակարգ և յուրաքանչյուր կանոնն օրինակով տեսադրող կոնկրետ մեկնություններ: Այսու և՛ ս. Օգոստինոսի մեկնահայեցակարգը ներկայանում է որպես մեկնագիտության (հերմենևտիկա) ու գիտամեկնության (էկզեգետիկա)՝ **մեկնուսույց մեթոդաբանական ու կիրառական ընդհանուր տեսությունների** փոխներհյուսվածությամբ ամբողջական գիտահայեցակարգ:

Ս. Օգոստինոսի «Սրբազան հերմենևտիկայի» (հայերեն թարգմանությամբ՝ «Սրբազան մեկնագիտություն») բուն կոչումն ու կատարումն է կայանալ ու ներկատարելագործվել որպես **Սուրբ Գրոց իմաստության ստույգ բանահասության ու մեկնորոշման հնարավորություններ բանաձևող կանոնակարգն իր հիմնաբանությամբ ու նպատակաբանությամբ հայտորոշող ներամբողջական գիտահայեցակարգ**¹³: Ինչպես Է. Ժիլսոնն է բնորոշում, «Օգոստինոսն ինքն իր առջև խնդիր էր դրել Սուրբ Գրոց նկատմամբ հավատի միջոցով հասնելու նրանում բովանդակյալ իմաստության բանահասությանը»¹⁴: Իր «Քրիստոնեական գիտություն», իսկ գրաբարով առավել ճշգրիտ թարգմանությամբ՝ «Յաղագս քրիստոնեական գիտութեան» աշխատության մեջ սուրբ հայրը ներկայացնում է Սուրբ Գրքում բովանդակյալ իմաստության բանահասության ու մեկնորոշման ընդհանուր, այսու և՛ մեկնուսույց գիտահայեցակարգը: Իսկ նրա մեկնագիտությունը զորունակ է ներկայանալու որպես **Սուրբ Գրոց իմաստության մեկնուսույց ընդհանուր գիտահայեցակարգ**, եթե նպատակադրված ու կարողունակ է վերահասու լինելու և մեկնորոշելու **աստվածայինը**, որ և պատմվում է Աստվածաշունչ մատյանում, ինչը և՛ որպես բուն դիտավորություն ու իսկորեն կատարում, իրականացվել է նրա մեկնագիտական երկում: Մասնագիտական գրականության մեջ արդեն իսկ հայտիմացությամբ

12 St̄n **Bertrand de Margerie**, An Introduction to the History of Exegesis, vol. 3 – Saint Augustine, Saint Bede’s Publication, Petersham, Massachusetts, 1991. **Henri de Lubac**, Medieval Exegesis: The four senses of scripture, vol. 1-3, by Wm. B. Eerdmans Publishing Co. (Grand Rapids, Michigan) and by T&T Clark Ltd (Edinburg, Scotland), USA, 1998:

13 Ս. Օգոստինոսի մեկնագիտության գոյութեան կարգադրումը քննորոշող **հիմնաբանության** առնչությամբ տես **Քչարյան Ռ.**, Ս. Օգոստինոսի քրիստոնեական վարդապետությունում Սուրբ Գրոց հասկացումն ու մեկնությունը շնորհ թե՛ գիտություն. (էկզեգետիկայի և հերմենևտիկայի համագոյությունը), էջ 152-169, իսկ **Նպատակային խնդրակարգի և հենց նպատակաբանության** առնչությամբ տես նույն տեղում և ապա մանրամասն տես **Քչարյան Ռ.**, Նշանների հատկորոշումը և անհայտ նշանների ու նշանակությունների բանահասության միջոցները Ս. Օգոստինոսի «Սրբազան հերմենևտիկայի» հայեցակարգում, «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», Եր., 2020, էջ 50-67, **Քչարյան Ռ.**, Ս. Օգոստինոսի «Սրբազան մեկնագիտության» հայեցակարգում ուսումնասիրության ենթակա բովանդակ առարկայում երկրորդ և երրորդ դասի առարկաները, «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», գ. IX, Եր., «Եվրոպրինտ» հրատ., 2019, էջ 88-107, **Քչարյան Ռ.**, Ս. Օգոստինոսի «Սրբազան Մեկնագիտության» ուսումնասիրության առաջնային ու գերագույն առարկան (Աստվածաշունչն չկորի ու Մանվելի հարցին հրեշտակի պատասխանի իմաստության խորհուրդի քննահամեմատական մեկնորոշմամբ), էջ 23-48, **Քչարյան Ռ.**, Սիրո չորս առարկաները Ս. Օգոստինոսի «Սրբազան մեկնագիտության» հայեցակարգում, «Հայ հասարակության զարգացման հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում. մարտահրավերներն ու դրանց լուծումները», Եր., «Եվրոպրինտ» հրատ., 2019, էջ 63-83:

14 **Жильсон Э.**, Философия в средние века, М., Изд. Культурная революция, Республика, 2010, с. 96.

յամբ «հերմենևտիկան սկզբնավորվել է աստվածայինի մեկնությունում»¹⁵: Ահավասիկ ս. Օգոստինոսի այդ երկում խորհրդածվող ու կյանքի կոչվող սրբազան մեկնագիտությունը **աստվածաշունչ համայն սուրբ գրերի իմաստապատումներում և կամ խորհրդապատումներում բովանդակյալ բուն աստվածայինի իսկություն հայտող իմաստության խորհուրդների բանահասության ու մեկնորոշման գիտահայեցակարգն է**: Վերոասացյալի բացորոշմամբ՝ նրա մեկնագիտական հայեցակարգի կոչումն ու կատարումը, ըստ որի և դիտավորությունը, կերպարանումն ու իրագործումն է հասկանալ ու մեկնորոշել աստվածաշունչ ամենայն մատյաններում՝ Սուրբ Գրքում և սուրբ հայրերի աշխատություններում, այսինքն՝ Սուրբ Հոգով ներշնչված եկեղեցական մատենագրության մեջ բովանդակյալ՝ **աստվածային իրողությունների և մարդկային իրողություններում ևս բուն աստվածայինի իսկություն հայտող իմաստության խորհուրդները**: Արդ՝ կարելի է հաստատագրել ս. Օգոստինոսի և ամենայն սուրբ հայրերի մեկնագիտական հայեցակարգերի համար ընդհանրական՝ միջնադարյան ու նաև հետայնու սրբազան մեկնագիտությունը սահմանող մտքի բանաձև. **սրբազան մեկնագիտությունը գիտություն է՝ ամենայնում**¹⁶ **աստվածայինի իսկությունը հայտող իմաստության բանահասության և մեկնորոշման խորհրդիմացության**:

Իր վերոմեկնորոշյալ կոչումով ու կատարումով՝ հասկանալ ու մեկնորոշել աստվածաշունչ ամենայն գրոց իմաստությունը, ս. Օգոստինոսի «Սուրբ Գրոց մեկնագիտությունը» կամ «Սրբազան մեկնագիտությունը» ներկայանում է որպես «իմաստության հերմենևտիկայի» սկզբնագոյացում¹⁷:

1. Աստծո երկյուղն ու բարեպաշտությունը՝ Սուրբ Գրոց ուղղաբանող և կամ այլաբանող իմաստության բանահասության ու մեկնորոշման նախադրյալ

Իմաստության սկիզբն ու բանալին մարդու՝ առ Աստված երկյուղն է¹⁸: Ըստ Օգոստինոսի՝ «**Աստծո երկյուղն** ունեցող մարդը ջանախույզ որո-

15 Murchadha Felix, Religion – The Blackwell Companion to Hermeneutics, ed. by Niall Keane and Chris Lawn, Wiley-Blackwell, A John Wiley & Sons, Ltd., Publication, 2016, p. 77.

16 Տե՛ս «Ամենայնում» – «ամենայն գոյում» կամ «ամենայն իրողություններում»:

17 Տե՛ս **Քոչարյան Ռ.**, Ս. Օգոստինոսի «Սրբազան Մեկնագիտության» ուսումնասիրության առաջնային ու գերագույն առարկան (Աստվածաշնչում Հակոբի ու Մանվելի հարցին հրեշտակի պատասխանի իմաստության խորհուրդի քննա-համեմատական մեկնորոշմամբ), էջ 32, **Քոչարյան Ռ.**, Սիրո չորս առարկաները Ս. Օգոստինոսի «Սրբազան մեկնագիտության» հայեցակարգում, էջ 66: Իսկ «իմաստության հերմենևտիկայի» իդեայի ու հայեցակարգի առաջադրումը տե՛ս **Քոչարյան Ռ.**, «Իմաստության հերմենևտիկան»՝ ամենայն գիտության և փիլիսոփայության հիմնորոշ ու համընդհանուր մեթոդաբանական հայեցակարգ, «Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ», միջազգային գիտաժողով, Եր., ԵՊՀ հրատ., 2014, էջ 18-21: Տե՛ս նաև **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Սովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, Եր., «Փրինթինգո», 2016, էջ 161-186, **Քոչարյան Ռ.**, Կրթություն և Հերմենևտիկա. Կրթություն՝ առ իմաստություն, Եր., «Եվրոպրինտ», 2018, էջ 170, 172-201:

18 Տե՛ս «Սկիզբն իմաստութեան երկել Տեառն» (Առակք Սողոմոնի, Ա, 7):

նում է **Աստծո կամքը** (ընդգծումները մերն են – Ռ. Ք.)¹⁹: Սուրբ Գրոց աստվածային իմաստությանն ուսումնասեր անձը, առաջնորդվելով Աստծո երկյուղով, աստվածայինի խորհրդիմացության ներկրթյալ է դառնում՝ Աստվածաշունչ մատյանում ասացյալի իր քննառոյթունն իրագործելով «**բարեպաշտ հեզոյթյամբ**»²⁰: Եվ ս. Օգոստինոսն իր մեկնագիտական հայեցակարգում բանաձևել է Սուրբ Գրքում բովանդակյալ իմաստոյթյան բանահաստոյթյան ու մեկնորոշման կանոնակարգ՝ հիմնարար սկզբունքներ, **ընդհանուր և հատուկ** կանոններ: Հիրավի, ձեռնարկելով Սուրբ Գրոց իմաստոյթյանն ընթերցասեր և ուսումնասեր ամենքի համար ընդհանուր մեկնուսույց ու հենց մեկնագիտական աշխատոյթուն և մշակելով հասկացման ու մեկնաբանոյթյան ամբողջական հայեցակարգ, սուրբ հայրն իր մեկնահայեցակարգում անհրաժեշտորեն ու առաջնահերթորեն բանաձևում է Աստվածաշունչ մատյանի մեկնագիտոյթյան **հիմնադրոյթներ՝ սկզբունքներ** ու **հիմնականոններ**: Եվ դրան գուզընթաց ու նաև հետալնու նա անհրաժեշտորեն ձևակերպում է նաև **հատուկ կանոններ**՝ և՛ աստվածաշունչ խորհրդասպատումների փոխգանազանվող բովանդակային յուրահատկոյթուններով պայմանավորված, և՛ մեկնուսույց հիմնարար սկզբունքների ու կանոնների ճշտիմացոյթունը տեսադրելու կոնկրետ օրինակների, և՛ անձանց յուրատեսակ տկարոյթունների առնչոյթյամբ²¹: Ինչպես և հերմենևտիկայի մասնագիտական գրականոյթյան մեջ ամրագրյալ է, միջնադարյան հայրերի և ռեֆորմացիայի աստվածաբանական հերմենևտիկան ներկայանում էր որպես **սրբազան տեքստերի մթին հատվածների հասկացման ու մեկնաբանոյթյան** գիտոյթուն և կամ «արվեստ ուսուցանող»²², ուրեմն **մեկնուսույց** իր հայեցակարգերով ու գործառոյթներով:

Հիրավի, Սուրբ Գիրն իր բովանդակ ասացյալում ներառում է և՛ **ընդհանուրը**՝ հղված ամենքի խրատուսուցմամբ հոգեթշկոյթյանը, և՛ **հատուկը**՝ հղված ոմանց փոխմանավող ու փոխգանազանվող մասնահատուկ տկարոյթյան հաղթահարմանը: Քանզի ոմանց մասնահատուկ տկարոյթունը, ախտը, մեղքն ու արատը, ինչն անհարիր, անկարելի ու անհարկի է վերինում, հարկ է կանխավ հոգեթշկել իր կենսաշրջանում՝ կենսատեղում ու կենսաժամանակում: Եվ ինչն անհարիր է վերին ու հոգևոր խորհրդանշանակոյթյանն ու անձանց վերին հոգեփորձառոյթյանը, խրատուսույց ու խորհրդանշանակ և հոգեառողջարար է ոչ այնչափ հոգեփորձառու ան-

19 Августин Блаженный, указ. соч., с. 161.

20 Նույն տեղում:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 193:

22 Гадамер Х.-Г., Истина и метод, М., «Прогресс», 1988, էջ 226:

ձանց շրջանակին²³: Արդ՝ որո՞նք են վերը ակնարկվող հիմնականոններն ու հատուկ կանոնները:

Ս. Օգոստինոսը, իր մեկնագիտության ուսումնասիրության առարկայում ներառելով նաև ուղղաբանող ու այլաբանող նշանները, կանոնարկում է դրանց նույնորոշող ու մեկնորոշող հնարավորությունները: Ըստ Օգոստինոսի՝ Սուրբ Գրոց իմաստապատումները և կամ խորհրդապատումները, աստվածային սերը, կամքն ու իմաստությունը ներհայտելով, ինքնին ներկայանում են ուղղաբանող և այլաբանող խորհրդանշանակությամբ, այսու և՛ իմաստության ամենայն ընթերցասերն ու ուսումնասերը պարտավոր է դրանց բանահասու լինել ու մեկնորոշել իրենց նույն այդ ուղղանշանակ ու այլանշանակ խորհրդաբանությամբ: Եվ, անշուշտ, սուրբ հայրը, առաջնահերթորեն քննորոշելով Սուրբ Գրոց **ուղղաբանող** դարձվածքների հասկացմանն անհրաժեշտ բանիմացության ու միջոցների խնդիրը²⁴, այնուհետ անդրադառնում է նաև **այլաբանության** հասկացման ու մեկնորոշման հատուկ կանոններին:

Աստվածային իմաստության ուսումնառու անձը, Սուրբ Գրքում ասացյալն ընթերցելով, քննառելով և ուսումնասիրելով **բարեպաշտ հեզությամբ**, անհայտ բառերի ու դարձվածքների, մթնահայտ հատվածների, որևոր պատճառներով ծագող անորոշությունների պարագայում անձնատուր չի լինում կասկածամոլությանը՝ հագուրդ տալով լոկ բանավեճի կրքին ու վիճամոլությանը, այլ հարստացնում է իր՝ լեզուների իմացությունն ու նաև ձեռք բերում իմացություն անհրաժեշտ տարատեսակ իրերի վերաբերյալ՝ Աստվածաշնչում գործածվող տարաբնույթ համեմատությունների ու նմանությունների գործողությանն ու հատկություններին բանահասու լինելու համար²⁵: Եվ միմիայն բարեպաշտ, սրտի հեզության ներկրթյալ անձն է²⁶, որ, հետամուտ լինելով Աստվածաշունչ մատյանի աստվածային իմաստության ուսումնառությանը, դեռևս չբացահայտված ճշմարտության նկատմամբ կասկածի ու նույնիսկ վեճի կրքամոլության որոգայթից զերծանելով²⁷, հավատարիմ է մնում աստվածային կամքն ու իմաստությունը որոնող ուսումնասեր իր կեցողությանն ու Սուրբ Գրոց ամենայն ասացյալում Աստծո կամքի ու իմաստության խորհուրդի ճշմարտության նկատմամբ իր հավատին ու սիրուն: Արդ՝ բարեպաշտ հեզության ներկրթյալ՝ աստվածային իմաստությանն ընթերցասեր և ուսումնասեր անձն է, որ և հնարավորություն ունի Սուրբ Գրոց ամենայն իմաստապատումներում Աստծո կամքի ու իմաստության խորհուրդների որոնմանը հավատարիմ իր հոգևոր կեցողությամբ հասու և ըն-

23 Տե՛ս նույն տեղում:

24 Տե՛ս **Քոչարյան Ռ.**, Նշանների հատկորոշումը և անհայտ նշանների ու նշանակությունների բանահասության միջոցները Ս. Օգոստինոսի «Սրբազան հերմենևտիկայի» հայեցակարգում, էջ 50-67:

25 Տե՛ս **Августин Блаженный**, նշվ. աշխ., էջ 161-162:

26 Տե՛ս նույն տեղում, էջ 159-160:

27 Տե՛ս նույն տեղում, էջ 161:

կալ լինելու ուղղաբանող և կամ այլաբանող պատմողությամբ հայտնյալ երկայնաբան խորհրդապատումների ու նաև կարճառոտ խորհրդաբանությունների (սաղմոսների, առակների) բուն նշանակությամբ, ինչպես նաև թվացյալ ուրույն բազմանշանակությունները որպես մեկ միասնություն համարվանդակող իմաստության խորհրդիմացությունն ու գիտությանը: Ահավասիկ ս. Օգոստինոսի «Քրիստոնեական գիտությունը» մեկնագիտական հիմնարար աշխատությունը մտահղացվել էր որպես աստվածաշունչ ամենայն գրերի իմաստության խորհուրդների քննա-հասկացման ու մեկնորոշման խնդրակարգում բարեպաշտ հեզությամբ ուսումնառություն ու առաջնորդություն փնտրող ամենայն անձանց՝ **հոգևոր սիրով ու կամավոր հանձնառությամբ ու նույնիսկ պարտավորվածությամբ, իր հոգու ու մտքի իսկը հոգևոր նվիրումով մատուցելու մեկնուսույց ու հենց առաջնորդող գիտությունը՝ Աստծուց ու Իր շնորհից ուսյալ իմաստության իր խորհրդիմացությամբ իսկ խորհրդագրյալ իր երկի դիտավորությամբ, ներկերպառությամբ ու կատարումով**²⁸: Եվ Սուրբ Գրոց ամենայն մատյաններում ներբովանդակյալ իմաստության՝ իմաստապատումների ու խորհրդապատումների և կամ սաղմոսների ու առակների կարճառոտ խորհրդաբանությունների քննա-հասկացման ու մեկնորոշման համար, ըստ Օգոստինոսի, էական է նկատի ունենալ, որ **ամենայն երկնշանակություն լինում է բառերի ուղղակի կամ փոխաբերական, ասել է թե՛ ուղղաբանող և կամ այլաբանող նշանակությամբ**²⁹:

2. Սուրբ Գրոց ուղղաբանող իմաստության մեկնորոշումն ըստ մասերի՝ առ իմաստ ներկապակցման, հավատի օրենքի և համատեքստով ամբողջացող համակապակցման

Բառերի **ուղղաբանող** նշանակությամբ Սուրբ Գրոց հասվածների մթին նշանակության պարագայում ճշմարիտ հասկացման ու մեկնորոշման համար, ըստ Օգոստինոսի, առաջնահերթորեն հարկ է քննադիտարկել, թե արդյոք ստույգ է բառերի փոխդասավորությունը նախադասության կառուցվածքում, և ըստ հարկի ու պատշաճի՞ է բառերի ներկապակցման ու փոխշարահյուսման այդ կարգին հետևող ընթերցանությամբ առհայտվող իմաստը, որով և՛ իմացահայտվող բուն իսկությունը, թե՞ ոչ: Եվ եթե պատշաճ և ուշագնի քննադիտարկումով չի պարզահայտվում, թե ինչպես է հարկի բաժանել ու փոխկապակցել բառերը, ըստ այդմ և ընթերցել ու իմացահայտել իսկություն հայտող իմաստը, պետք է դիմել սուրբ եկեղեցու վարդապետությամբ ուսյալ

28 Տե՛ս նույն տեղում, էջ 162:
29 Տե՛ս նույն տեղում:

ու հարգի «**հավատի օրենքին**» (**regula fidei**)³⁰: Այսինքն՝ ընթերցվող իմաստի ճշտորոշման հարցում կողմնորոշվել՝ հետևելով **հավատի հիմնօրինություններ** և կամ **հավատի նույնօրինություններ**, ասել է թե՛ հավատի ճշմարտությունների նույնիմացությամբ ու համապատասխանությամբ ստուգորոշմանն ամենայն իմաստի, ինչը և կնշանակի եկեղեցու ուսուցանությամբ արդեն հայտինաց հավատի ճշմարտություններին նույնականությամբ կամ վերանմանությամբ ճշտորոշել ընթերցվող իմաստը: Իսկ եթե նույնիսկ այդ պարագայում Սուրբ Գրոց տվյալ հատվածն իր բաղկացուցիչ մասերով ընկալվում է որպես երկնշանակ ու մթին, հարկ է դիմել **ասման համակապակցմանը**, նույնն է թե՛ **համատեքստին**, և դիտարկել տեքստում այդ հատվածը շրջանակող և դրան նախորդող ու հաջորդող մասերը ևս, ըստ որոնց փոխներկայակցման էլ հայտորոշ է դառնում, թե մթին իմաստ ու տարակույս հարուցող իր երկնշանակություններում կամ տարանշանակություններում մտահայտվող հասկացություններից որն է տեքստին առավել մոտ և իսկազույն հարմարությամբ համակապակցվում այդ մասերին³¹: Հետամուտ վերոասացյալի լուսաբանմանը՝ Օգոստինոսը քննահայտում է Սուրբ Գրքից օրինակներ, որոնցում երկնշանակություններով կամ տարանշանակություններով իմաստի անորոշության ու տարակույսի փարատման և ասացյալի հասկացման ձգտմանը՝ բառերի բաժանումով ու կապակցումով հասկացությունների իմաստները ճշտորոշելի են ոչ միշտ ու միանշանակորեն հավատի նույնօրինությամբ կամ համանմանությամբ: Քանզի երբեմն հնարավոր բաժանումներից և ոչ մեկը չի հակասում հավատի ճշմարտություններին, այլ երբեմն, հենց համատեքստի ներկայակցումներից բխող ու հյուսվող, մտակերպվող ու որոշարկվող իրենց իմաստով, իսկ հավատի համանմանությանը և կամ համատեքստին այդ բաժանումների ու կապակցումների տարբերակների չհակասելու պարագայում ընթերցողն արդեն ազատ է այդ տարբերակների ընտրության մեջ³²: Երբեմն էլ երկիմաստություն, իմաստի անորոշություն առաջանում է, եթե չասվի, թե ընթերցողի անփույթ ընթերցումից, ապա ընթերցման տարբերությունից, և այդ պարագայում **իմաստը որոշարկելի է ընթերցանության ուշագնին կարգավորությամբ**³³: Զորօրինակ՝ տվյալ հատվածն ընթերցելիս ճշտիմաց է ընկալվում՝ զատորոշվում ու նույնորոշվում Սուրբ Գրքում ընթերցվող որևոր հարց՝ որպես **մտորելու ենթակա հարցադրում**, որին հետևող նախադասությունը, թեև հաստատելով հավատի ճշմարտություն, ենթադրում է հարցադրման լոկ բացասական, այլ ոչ թե դրական պատասխան³⁴, թե՛ **ուղղակի հարց** է, որին անմիջապես հետևելու է միմիայն իսկություն հավաստող՝ հաս-

30 Տե՛ս նույն տեղում, էջ 163:

31 Տե՛ս նույն տեղում:

32 Տե՛ս նույն տեղում, էջ 163-166:

33 Տե՛ս նույն տեղում, էջ 166-167:

34 Զորօրինակ Հռոմ. Ա, 33-34, տե՛ս նույն տեղում, էջ 167-168:

տատական «այո» կամ Ժխտական «ոչ» երկինարավորությամբ պատասխան³⁵: Երբեմն էլ Սուրբ Գրքում ասացյալի իմաստի երկնշանակ կամ տարանշանակ անորոշությունն առաջանում է նաև տվյալ թարգմանության լեզվով **արտասանության մեջ հնչյունային երկբայելի վանկարկման** պատճառով, որ և որոշարկելի է բնագրի **տեղեկագրերով** և նույնիսկ վերաթարգմանելով խնդրո հասկացությունն առավել համապատասխան ու ստուգորոշ **բարբարիզմով՝** ոչ գրական, ժողովրդական բառա- ու լեզվագործածության միջոցով³⁶, կամ վերարտահայտելով «**նույն մտքին վերաբերող մերձագույն բառով**»³⁷, ասել է թե՛ նույնը մտահայտող, նույն միտքն ու իմաստը ներհայտող կամ առհայտող մերձագույն բառով: Նույն կերպ պետք է լուծվեն նաև այն անորոշությունները, որոնք առաջանում են ոչ թե նախադասության մեջ բառերի դասավորության կամ արտասանության, այլ տվյալ լեզվի քերականական այլևայլ առանձնահատկությունների պատճառով³⁸:

Աստվածաշունչ մատյանի՝ բառերի **ուղղաբանող** նշանակությամբ հատվածների անորոշ իմաստների վերոհայտնյալ իր քննորոշումը միաբերող անփոփմամբ Օգոստինոսը ներքին համոզումով հաստատագրում է, որ «Սուրբ Գրոց ուղղաբանող բառերում հազվադեպ կարելի է գտնել այնպիսի անորոշություններ, որոնք անլուծելի կամ անքննորոշելի են հեղինակի դիտավորությունը հայտորոշող՝ տեքստի հանգամանքներով, կամ թարգմանությունների համեմատությամբ, կամ բնագրի տեղեկագրերով»³⁹:

3. Սուրբ Գրոց իմաստության մեկնորոշման համաբովանդակ խնդրակարգում ուղղաբանությանը զուգակից՝ այլաբանող իմաստության խորհրդիմացություն

Ըստ Օգոստինոսի՝ Աստվածաշունչ մատյանի համանշանակ ու խորհրդապատում իմաստությունը՝ սպառիչ լիանշանակությամբ ու խորանշանակությամբ, **գրառությամբ բանահայտ իր հնարավորություններում** չի սահմանափակվում իմաստների լեզվագրության ուղղաբանող նշանակությամբ: Սուրբ Գրոց խորհրդապատում իմաստությունն անփոխանցելի է մարդկային բանական հոգուն ու մտքին իր բնագրի ու նաև ամենայն լեզուներով թարգմանության՝ բառերի, բառակապակցումների ու դարձվածքների միմիայն ուղղաբանող նշանակությամբ: Եվ Օգոստինոսը անփոփելով Սուրբ Գրոց բառերի **ուղղաբանող** նշանակությամբ ասացյալի՝

35 Ջորջիանակ Հռոմ. Թ, 30, տես նույն տեղում, էջ 168:

36 Տես նույն տեղում, էջ 168-169:

37 Նույն տեղում, էջ 169-170:

38 Տես նույն տեղում, էջ 170-172:

39 Նույն տեղում, էջ 172:

երկնշանակությամբ կամ տարանշանակությամբ մթնահայտ ու անորոշ իմաստների քննա-հասկացման ու որոշարկման հնարավորությունների իմացահայտումը, իր մեկնագիտական հայեցակարգն ամբողջացնում է արդեն նաև **այլաբանող** նշանակությունների քննորոշմամբ: Աստվածաշնչի հասկացման ու մեկնորոշման իսկությունը հայտող ու մեկնուսույց իմաստության խորհրդագիտությունը լրումի բերող իր ուսուցանությունը սուրբ հայրն այնուհետ շարունակում է այլաբանող և նույնորեն մթին ու անորոշ նշանակությունները քննորոշելով՝ աստ ևս «աննվազ հոգաճության ու ջանադրության»⁴⁰ անհրաժեշտ ու նախընտրելի պիտոյության կամավոր իր հանձնառության սիրով:

Սուրբ հայրը կանխավ հոգևոր զգոնության է կոչում ամենքին՝ «այլաբանող խոսքը չընկալելու որպես ուղղաբանող»⁴¹ և, ընդհակառակը, «ուղղաբանող խոսքը չընկալելու որպես այլաբանող»⁴²: Աստվածաշնչյան պատումի ամենայն հատվածներում, որոնցով և բաղադրյալ ու ամբողջական համաբովանդակությունում, բուն ասացյալը խորհրդանշանակ է: Արդ՝ ամենայն հատվածներում ասացյալը հարկ է հասկանալ ու մեկնորոշել իր մեջ և՛ կամ իրենով գուցե ամենայնի և գուցե որևէի իսկություն հայտող՝ կամ ուղղաբանող, կամ այլաբանող իր նշանակությանը համարժեք խորհրդանշանակությամբ: Սուրբ հայրն այս առնչությամբ որպես էական օրինակ է հիշատակում Պողոս Առաքյալի խոսքը՝ «գի գիրն սպանանէ, իսկ հոգին կեցուցանէ» (Բ Կորնթ., Գ, 6), որը և ըստ Օգոստինոսի, որպես Սուրբ Գրոց հասկացման ու մեկնորոշման հիմնարար սկզբունք, հատկորոշում է նրա մեկնագիտական հայեցակարգը: Մարդու բնությունը, ըստ ս. Օգոստինոսի, հոգեմարմնավոր է⁴³: Եվ իր մեկնահայեցակարգում՝ մեկնուսույց ու խորհրդագետ իր մեկնագիտությունում, Օգոստինոսը Սուրբ Գրքում ասացյալի իմաստի որոնման, քննա-հասկացման ու մեկնորոշման խոհընթացում ու նշանակետում կողմնորոշվում է դեպի **հոգևոր խորհրդիմացությունը**: Արդարև, **իմաստությունը հոգևոր է, և իմաստության ամենայն խորհուրդները ևս հոգևոր են**, ուստի և Սուրբ Գրքում ասացյալի բուն նշանակությունը հարկ է հասկանալ ու մեկնորոշել և՛ որպես **մտորոշման ընթացք՝ հոգևոր խորհրդիմացությամբ**, և՛ որպես **իմաստի ու հենց իմաստության ձեռքբերվող արդյունք՝ հոգևոր խորհրդիմացություն**:

Աստվածաշնչյան պատումները, անշուշտ, իսկություն հայտող իմաստապատումներ են, և, սակայն, անհարկի է մարդկային բանական հոգին

40 Նույն տեղում:

41 Նույն տեղում, էջ 172, տես նաև էջ 179:

42 Նույն տեղում, էջ 179:

43 Մարդու հոգեմարմնավոր միությունում «մերքին մարդ» ու «արտաքին մարդ» տարորոշող՝ քրիստոնեական ու նաև պլուտինյան գաղափարներում ու հասկացություններում բովանդակյալ իմաստությամբ ներկրթյալ ս. Օգոստինոսի ըմբռնման մասին մանրամասն տես **Markus R. A.**, Marius Victorinus and Augustine – The Cambridge history of later greek and early medieval philosophy, ed. by Armstrong A.H., New York, Cambridge University Press, 2008, էջ 354-361:

ու միտքը ստորաբերելով անբանականին խորհրդապարունակ այդ իմաստապատումները հանգեցնել մարմնա- և նյութանշանակության: Վերոասացյալը կնշանակի, որ աստվածաշունչ պատումները սոսկ իմաստապատումներ չեն, այլ խորհրդապատումներ, որոնց և հարկ է ընկալու և իմաստահասու լինել՝ ոչ ամենևին մարդկային բանական հոգին, միտքն ու մտածողությունը ստորաբերելով ու նմանակերպելով կենդանու ոչ բանական կարողությանը: Ըստ որի՝ ասացյալի բուն նշանակությունը ներկայավորվում, կապակցվում ու... **կապանքվում**, հայտորոշվում ու... **սպառվում** է որպես մարմնա կամ նյութանշանակություն, այլ **հոգևորությամբ** ներիմա՝ հասկացմանը և հայտիմաց՝ մեկնորոշմանը, այդու և մտորոշելի են հենց **հոգևոր խորհրդիմացությանը**: «Քանզի ով այլաբանությունն ընկալում է բառացիորեն՝ իբրև թե ասված սեփական իմաստով, մարմնականն է իմաստաբանում, և անհնար է ըստ պատշաճի հոգու մահ անվանել և ոչ մի մահ, քան հենց այն, երբ հոգին, տառին հետևելով, մարմնին է ենթարկեցնում նույնիսկ այն, ինչն իր գերազանցությունն է կենդանիներից, այսինքն՝ հենց բանականությունը: Ով հետևում է տառին, նա, ինչպես ոչ-բանական կենդանին, բառերի այլաբանող իմաստներն ընկալում է որպես սեփական (ուղղաբանող – Ռ. Ք.) իմաստներ և, ընդհակառակը, չի ջանում բառով բառացիորեն արտահայտվողում գտնել այլ, վերին նշանակություն... Իսկ դա հոգու ստրկության փորձանքն է, երբ նա ի ներքո նշանի անկարող է տեսնել բուն իրը և անկարողունակ է վերարձակելու իր մտահայեցողությունը մարմնեղեն բնությունից վեր՝ հավերժի հայեցմանը»⁴⁴: «Քանզի ստրուկ նա է, ով պաշտում կամ ծառայում է իրին՝ բանահասու չլինելով նշանակությանը, իսկ նա, ով ի վերուստ հաստատված խորհրդանշանը մեծարում է որպես օգտակար, մեծարում է ոչ արտաքինն ու անցողիկը, այլ դրանցով նկատառյալը»⁴⁵: Եվ արտաքինն ու անցողիկն անդրանցող անձը՝ իր հոգու ու մտքի վերընթացությամբ այս կյանքի իրողությունների նշանածածկ խորհրդին վերահասու և ամենայնում խորհրդահայտ Աստծուն ու աստվածայինը մեծարող, ըստ ս. Օգոստինոսի, իսկորեն ազատ ու հոգևոր է նույնիսկ ստրկության իր կացությունում, երբ պետք չէ և ժամը չէ բացատրելու մարմնական կյանքով ապրող մարդկանց այն նշաններն ու խորհրդանշանները, որոնց լծի ներքո նրանք հարկ է հեզության առաքինության ներկրթյալ լինեն»⁴⁶:

44 Августин Блаженный, 62վ. աշխ., էջ 172-173:

45 Նույն տեղում, էջ 177:

46 Տե՛ս նույն տեղում, էջ 178:

4. Հեթանոսների «իրերի պաշտամունքի» ու հրեաների «նշանների ու օրենքի պաշտամունքի» բացասումը և նշանասքող սրբազան հոգևոր խորհուրդի՝ Աստծո ու աստվածայինի մեծարումը

Անշուշտ, սուրբ հայրը հստակ տարբերակում էր զգայական նշանների ու գրի նկատմամբ հրեա և այլ ժողովուրդների «ստրկությունը», քանզի հրեաները թեև ունեին կապվածություն և **ծառայում** էին զգայականորեն ընկալվող նշաններին, դրանք մշտապես դիտում, ընկալում էին որպես խորհրդանշան ու հիշեցում միակ ու հավիտենական Աստծո մասին⁴⁷: Եվ նրանք, հոգևոր իրերի նշանների խորհրդաբանությանն անհիմա, հաճախ այդ նշաններն էին ընկալում որպես բուն իրեր, նույնացնում զգայելի նշանը իրենով նշվող հոգևոր խորհուրդին՝ այդպիսով իրենք իրենց զրկելով զգայականորեն ընկալվող նշանի հոգևոր խորհուրդին բանահասու իմացությունից ու կեցողությունից: Այսպես, շաբաթի հոգևոր խորհրդաբանությանն անհիմա և նշանը նույնացնելով իրենով արտահայտվող բուն խորհուրդին, նրանք այդ կերպ մերժում ու մեղադրում էին հենց Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին: Քանզի իրենց նման չէր հարգում ու պահում շաբաթը⁴⁸, այլ ընկալում էր այն հոգևոր խորհրդանշանակությամբ և որպես իրավասու՝ հոգևորաբար մեկնահայտում շաբաթի նշանակությունն ու բուն խորհուրդը: Եվ սակայն, հրեաները, զգայելի նշանների հոգևոր հասկացման իրենց անգիտակությամբ հանդերձ, ոչ լոկ նշաններով խորհրդահայտ **իրերի**, այլ հենց նշանների նկատմամբ իրենց պաշտամունքով և ուրեմն մարմնականի ու նյութեղենի ստրկության լծի ներքո, այդ կերպ իրենց հարգն էին մատուցում միակ ու հավիտենական Աստծուն: Հիրավի, «դեռ կատարյալ ստրուկ չէ նա, ով թեև չի հասկանում խորհրդանշանի նշանակությունը, այնուամենայնիվ, ընդունում է այն ոչ այլ կերպ, քան որպես նշան»⁴⁹: Իսկ հեթանոսները, եթե անգամ ընկալում ու պաշտամունք էին մատուցում զգայելի ինչ-ինչ նշանների՝ որպես դրանցով արտահայտվող խորհուրդների ու բուն իրերի, հրեաներին նույնանման, մարմնականին ու նյութեղենին իրենց ստրկությամբ, ամենայն այդ նշաններով կամ նշաններում պաշտում էին մարդկանց ձեռակերտ կուռքերի, այլ ոչ թե ճմարիտ Աստծուն⁵⁰: Հրեաների ու հեթանոսների կողմից ի վերուստ սահմանված կամ անձնական վերագրված սրբազնության նշանների վերոմեկնորոշյալ

47 Տե՛ս նույն տեղում, էջ 173-174:

48 Տե՛ս նույն տեղում, էջ 174:

49 Նույն տեղում, էջ 178-179:

50 Տե՛ս նույն տեղում, էջ 175-176:

վերաբերմունքը ս. Օգոստինոսը տարաբնորոշում ու գնահատում է նաև մտքի հետևյալ բանաձևմամբ. «Լավ է ծառայել թեկուզ և անհասկանալի, սակայն օգտակար խորհրդանշաններին, քան օժտել դրանց անօգտակար նշանակությամբ և այդպիսով իրեն լծադրել պարզորեն չիմացության ստրկության փոխարեն մոլորության խեղդող օղակը»⁵¹: Եվ այնուամենայնիվ, սուրբ հայրը հաստատագրում է երկուստեք ընդհանուր թերությունն ու թյուրությունը, որ և քրիստոնեությամբ ամենքին հնարավորվում է ինքնահաղթության՝ առ միակ ու ճշմարիտ Աստված քրիստոնեության վարդապետությամբ. «...Ինչպես տառից կախված լինելը և նշաններն ընդունելն իրերի փոխարեն գործն է մարմնականի նկատմամբ թուլության, այնպես և նշանների անպիտան մեկնորոշումը գործն է մոլորյալ ուղեղի»⁵²: Ահա թե ինչու, ըստ Օգոստինոսի, քրիստոնեությունն ամենայն նշաններից ազատագրել է ամենքին, հեթանոսների պարագայում անօգտակար ու անպիտան նշանների ոչնչացումով նրանց հեռու պահելով կուռքերին հոգեկուլ պաշտամունքից և ուղղելով միակ Աստծո երկրպագության՝ ամենայն անձանց հոգու կորցրած կուսությունը վերականգնել է հոգևոր սիրով միության ճշմարիտ Աստծուն: Իսկ հրեաների պարագայում, աստվածապաշտության պիտանի խորհրդանշաններում մեկնահայտելով դրանցով քողածածկ բուն իրերը, հմտավարժում է խորհրդանշանների հոգևոր բանահասության⁵³: Իսկ խորհրդանշանի նշանակությամբ բանահասու և խորհրդիմաց յուրաքանչյուր ոք մեծարում է և հարկ է մեծարի այն ոչ այլևս մարմնական ստրկության, այլ իսկական ազատության ոգով⁵⁴: Սրբազան հայրը մեկնահայտ իր գրությամբ ընդգծում է քրիստոնեության՝ ամենքին ազատագրող ու ազատության մեջ կայացնող իմաստությունը: Սուրբ Գրոց բարեպաշտ ընթերցողին իմաստության մեկնուսույց ու խրատուսույց իր մտքի բանաձևով ս. Օգոստինոսը ամենքի՝ Քրիստոսով ազատագրությունն է իմացահայտում ու բուն ազատության կոչում և ներկրթում մեկնորոշող այն հաստատագրությամբ, որ Տիրոջ հարությունը հստակագույն հայտնացույց ու ապացույց մեր ազատության, արդարև, շնորհատրեց մեզ չպարտավորվել մեծարել նույնիսկ այն տեսակ խորհրդանշաններ, որոնց և բանահասու ենք նշանակության⁵⁵:

51 Նույն տեղում, էջ 179:

52 Նույն տեղում, էջ 178:

53 Տե՛ս նույն տեղում, էջ 176-177:

54 Տե՛ս նույն տեղում, էջ 178:

55 Տե՛ս նույն տեղում:

5. Ուղղաբանության ու այլաբանության նույնորոշումը ըստ բարոյականության և մեկնորոշման կանոնները ըստ «սիրո» ներկրթող Սուրբ Գրոց դիտավորության

Ս. Օգոստինոսն իր մեկնուսույց ու հենց մեկնագիտական (հերմենևտիկական) հայեցակարգում որպես **Սուրբ Գրոց իմաստության բանահաստության ու մեկնորոշման կանոն** է ամրագրում նաև ըստ Գրի դիտավորության՝ ուղղանշանակի կամ այլանշանակի անհրաժեշտորեն միմյանցից տարբերակող ու աննույնորեն ընկալումը հավաստագրող մտքի բանաձևը. **Աստվածաշնչի ճշմարիտ հասկացման ուղղորդման համար հարկ է ոչ միայն այլաբանող նշանակությամբ ասացյալը չընկալել ուղղանշանակությամբ (ուղղաբանող նշանակությամբ), այլև, ընդհակառակը, ուղղաբանությամբ ասացյալն էլ չընկալել այլանշանակությամբ (այլաբանող նշանակությամբ)**⁵⁶:

Իմաստության ընթերցասեր և ուսումնասեր յուրաքանչյուր ոք Սուրբ Գրքի ընթերցմանը զուգընթաց առնչվում է ներխորհրդածվող այն հարցադրմանն ու անորոշությանը՝ ուղղաբանող, թե՞ այլաբանող է Սուրբ Գրքի ընթերցվող հատվածում ասացյալը: Եվ, ի պատասխան ընթերցմանը զուգընթաց այս ներհարցման և անորոշության հաղթահարմանը, ս. Օգոստինոսն իմացահայտում է սկզբունք ու եղանակ ասացյալի՝ որպես ուղղաբանող կամ այլաբանող նույնորոշման: «Ամենայնը, որ, Սուրբ Գրքում ընկալվելով ուղղաբանող իմաստով, անհամաձայն է բարոյականությանը կամ հավատի ճշմարտություններին, հարկ է հասկանալ այլաբանող իմաստով»⁵⁷: Արդ՝ վերոգրյալ սկզբունքը ներկայանում է որպես ս. Օգոստինոսի «Սրբազան մեկնագիտության» հայեցակարգի հերթական **կանոն ու մեկնուսույց մտքի բանաձև**. **Սուրբ Գրքում ամենայնը, որ ընկալվում է իր ուղղանշանակությամբ, եթե անհամաձայն է բարոյականությանը կամ հավատի ճշմարտություններին, հարկ է հասկանալ խորհրդաբանող այլանշանակությամբ**:

Ըստ ս. Օգոստինոսի՝ **բարոյականությունն ըստ ամենայնի հաստատված է առ Աստված և առ մերձավոր սիրո վրա, իսկ հավատի ճշմարտությունները՝ Աստծո և մերձավորի իմացության**: Իսկ հույսը ներբովանդակվում է յուրաքանչյուրի խղճում կամ ներքին զգացողությունում, թե ինչպես է հաջողվել Աստծո ու մերձավորի նկատմամբ սիրո մեջ և ինչքան է հեռու նրանց ճանաչողությունում⁵⁸:

56 Տե՛ս նույն տեղում, էջ 179:

57 Նույն տեղում:

58 Տե՛ս նույն տեղում, էջ 179-180:

Սակայն, բազում մարդիկ, ըստ Օգոստինոսի, **այլաբանող** են համարում Աստվածաշնչի այն հատվածները, որոնցում Սուրբ Գիրք կան պատվիրում է այն, ինչը հակառակում է առկա **սովորույթներին**, կան նշավակում այն, ինչը դրանց համաձայն է: Եվ պատճառն այն է, որ մարդիկ առհասարակ հակված են նշավակելու և դատապարտելի համարելու որևիցե խորհուրդ, միտք, գործ և կան մտածելակերպ, խոսելակերպ, գործելակերպ, ոչ թե այն ծնող ու հիմնապատճառ մեղքը: Զորօրինակ՝ վավաշոտությունը հայտանշելով, այլև առավելաչափ նախատելով ու դատապարտելով **ըստ իրենց սովորությունների** և ուրեմն միայն այն, ինչը և պարսավում ու պախարակում են իրենց ժամանակակիցներն ու հայրենակիցները⁵⁹: «Այնինչ Գիրք չի պատվիրում և ոչինչ՝ բացի սիրուց, ու չի նշավակում և ոչինչ բացի վավաշոտությունից՝ այս միակ եղանակով կայացնելով ու շտկելով բարքերը»⁶⁰, - գրում է սուրբ հայրը: Արդ, ի մի բերելով վերոասացյալը՝ որպես ս. Օգոստինոսի «Սրբազան մեկնագիտության» հայեցակարգի հերթական **կանոն**, կարելի է վերաձևակերպել հետևյալ մտքի բանաձևը.

Սուրբ Գիրն իր դիտավորությամբ ու կատարմով, ամենայն իր պատվիրումներով ու խրատուսույց պատմումով պատվիրում է միմիայն սեր, որից և բխող տեսագործական իմաստություն և նշավակում միմիայն ցանկասիրություն, որից և բխող ամենատեսակ անառակություն ու չարագործություն՝ այդ միակ եղանակով կայացնելով ու շտկելով մարդկային բարքերը՝ ներանձնայինի, կենսակերպի ու համակեցության բարոյականությունը:

Սուրբ Գրքում ասացյալի ուղղանշանակության կան այլանշանակության՝ ըստ ընդունված սովորույթի նույնորոշմանը վերոնմանությամբ է և այն պարագայում, **երբ միտքը կանխահամոզված է որևիցե մեղքոտ կարծիքով**, որ հակված են **այլաբանություն** համարելու Սուրբ Գրքոց ամենայն պնդումներ, որ և հակառակ են ընդունված մոլորությանը: «Այնինչ Սուրբ Գիրք և՛ անցյալ, և՛ ներկա, և՛ ապագա իրադարձություններով ու գործերով չի հաստատում և ոչինչ՝ բացի **ընդհանրական հավատից**. ամենայնը Նրանում՝ պատմությունը, մարգարեությունները, հիմնախորհուրդներն ու խրատուսույցները, ուղղված են առ այն, որ կյանքի կոչեն ու ամրապնդեն **սերը**, արմատախիլ անեն ու ոչնչացնեն **ցանկասիրությունը** (ընդգծումները մերն են - Ռ. Ք.)»⁶¹: Արդ, ի մի բերելով վերոասացյալը, որպես ս. Օգոստինոսի «Սրբազան մեկնագիտության» հայեցակարգի հերթական **կանոն** կարելի է վերաձևակերպել նաև հետևյալ մտքի բանաձևը.

59 Տե՛ս նույն տեղում, էջ 180:

60 Նույն տեղում:

61 Նույն տեղում, էջ 181:

Սուրբ Գիրն իր պատմությամբ, մագարեություններով, հիմնախորհուրդներով (դոգմաներով) ու խրատուսույցներով՝ անցյալ, ներկա, ապագա ամենայն իրադարձություններով ու գործերով, հաստատում է միայն ընդհանրական հավատ, որից և բխող ամենայն խորհուրդ, խոսք և գործ՝ դիտավորությամբ մարդկային ինքնությունում, կենսակերպում ու համակեցությունում կյանքի կոչելու և ամրապնդելու սերը, արմատախիլ անելու և ոչնչացնելու ցանկասիրությունը:

Սուրբ Գրքում ներբովանդակվող ու իմացահայտվող՝ քրիստոնեական կենսուղու փրկամետ իմաստությունում, այսու և՛ այն մեկնորոշելու նպատակամետ ս. Օգոստինոսի մեկնագիտական ու մեկնափիլիսոփայական մեկ միասնական հայեցակարգում առաջնահերթ ու հիմնարար նշանակություն ունի **հոգևոր «սիրո»** քրիստոնեական ըմբռումը՝ որպես քրիստոնեական ինքնությանն ու կենսակերպին հոգեկեցույց ու կենարար առաքիլություն և անձանց փրկանպատ գործություն՝ իրեն հակոտնյա ունենալով **մարմնական «սիրո» կամ «անձնասիրության» ու ամենատեսակ «ցանկասիրության»** ըմբռումը՝ որպես հոգեկործան ու կենսակործան ախտ, կրկնամեղ արատ և անձանց մոլարար ու փրկամերժ գործություն: Ինչպես և գրում է սուրբ հայրը, Սուրբ Գրքում Սողոմոնն իր թագավորության սկզբում հոգևոր սիրո բոցավառ փափագով ստացավ իմաստություն, որ և կորցրեց ցանկասիրությամբ՝ կնամոլ մարմնական սիրով իր գայթակղությամբ⁶²: Ըստ Օգոստինոս Երանելու՝ «ցանկասիրության բռնատիրության փլուզմամբ սերն է ամենայնում թագավորում արդարագույն օրենքներով, այսինքն՝ պատվիրում սիրել Աստծուն հանուն Իրեն, իսկ ինքն իրեն ու մերձավորին՝ նույնորեն հանուն Աստծո»⁶³: Այսու և՛ նրա մեկնագիտական հայեցակարգում որպես այլաբանական խոսքի մեկնուսույց կանոն է ձևակերպվում հետևյալ մտքի բանաձևը. **«Այլաբանող հատվածները հարկ է ամենայն ուշիմությամբ քննորոշել այնչափ, որչափ և կարելի է մեկնորոշել հօգուտ սիրո թագավորության, իսկ եթե որևիցե հատված ուղղաբանորեն ու սեփական իմաստով արտահայտում է սեր, ապա այլևս կարիք չկա այն համարելու այլաբանություն»**⁶⁴:

Արդարև, «ըստ Օգոստինոսի, Աստծո և մերձավորի նկատմամբ սերը Սուրբ Գրքոց դիտավորությունն է»⁶⁵: Եվ Սուրբ Գրքոց իմաստության մեկնուսույց իր աշխատության մեջ սուրբ հայրը, աստվածաշնչյան նույն այդ իմաստությանն ընթերցասեր և ուսումնասեր անձանց հասկացման ու մեկ-

62 Տե՛ս նույն տեղում, էջ 200:

63 Նույն տեղում, էջ 189:

64 Նույն տեղում, էջ 189-190:

65 Cosgrove Ch., Toward a Postmodern Hermeneutica Sacra: Guiding considerations in choosing between competing plausible interpretations of Scripture – The meaning We Choose. Hermeneutical Ethics, Indeterminacy and Conflict of Interpretations», ed. by Charles H. Cosgrove, T&T Clark International, London · New York, 2004, p. 47.

նորոշման տեսությանը ներկրթելու դիտավորությանն ի կատար, անհրաժեշտ է համարում բացորոշել «սիրո» աստվածանմանող առաքինության, ինչպես նաև «անձնասիրության» ու ամենատեսակ «ցանկասիրության» վերածող մեղքի և ապա արդեն նույնիսկ արատի վերաբերյալ քրիստոնեական իր ըմբռնումները: Արդ, ձևակերպելով **Սուրբ Գրոց հատվածների՝ որպես ուղղաբանություն կամ այլաբանություն նույնորոշմանն ուղենպաստ ու սկզբունքորեն հնարատրող եղանակ**, այն մեկնորոշելու դիտավորությամբ Օգոստինոսը Աստվածաշնչի քրիստոնեական իմաստության մեկնուսույց իր վարդապետությունում իմացահայտում է նաև «սերն» ու «ցանկասիրությունը» քրիստոնեաբար ու հենց հոգևորությամբ վերըմբռնող մտքի բանաձևեր. «Սերը... հոգու ձգտումն է՝ սքանչանալ (հաճույք ապրել) Աստծով՝ հանուն Իրեն, և սքանչանալ իրենով ու մերձավորով՝ հանուն Աստծո»⁶⁶: Իսկ «ցանկասիրությունը... հոգու ձգտումն է՝ սիրել իրեն, մերձավորին և ամենայն այլ իր՝ ոչ հանուն Աստծո»⁶⁷: Ճշմարիտ ու հոգևոր սիրո գործողությունը, որն ուղղված է սեփական շահին, անվանվում է **բարեհոգածություն**, իսկ որն արդեն ուղղված է այլոց օգտին, անվանվում է **բարեգործություն**, և առաջինը նախորդում է երկրորդին, քանզի ուրիշի օգտին հնարավոր չէ գործադրել կամ օգտագործել այն, ինչը չունի ինքը⁶⁸: Նման կերպ և հակառակը՝ անսասնձ ցանկասիրության գործողությունը՝ ուղղված սեփական հոգու ու մարմնի վնասին ու քայքայմանը, կոչվում է **անառակություն** (flagitium – չարություն, չարագործություն), իսկ մերձավորի վնասին ու կորստյանը, կոչվում է **հանցագործություն** (facinus)⁶⁹: Անառակությունը նախորդում է չարագործությանը, և երկուստեք ամենայն մեղքերը գլխավորող սեռերն են, քանզի մարդը տրվում է չարագործության այնժամ, երբ անառակությունը ստորաբերում է նրա հոգին մինչև որևէ ամոթալի ու դժբախտ կարիքի, ոչնչացնում անառակությանը դիմակայող արգելապատնեշները, գտնում միջոցներ՝ անձնատուր լինելու անառակության⁷⁰: «Որչափ քանդվում է ցանկասիրության թագավորությունը, այնչափ և մեծանում է սիրո թագավորությունը»⁷¹: Ըստ իս՝ վերոասացյալ մտքի բանաձևը **մեկնուսույց իմաստությանն** ուսումնասեր մտքին առհայաց կարող է վեր հառնել նաև որպես ս. Օգոստինոսի «Սրբազան մեկնագիտության» հայեցակարգի հերթական կանոն. **Աստվածաշունչ Գրոց մտքի դիտավորությունն ու կատարումն է՝ մարդկային ինքնությունում**

66 Августин Блаженный, указ. соч., էջ 181:

67 Նույն տեղում:

68 Տե՛ս նույն տեղում, էջ 182:

69 Նույն տեղում, էջ 181:

70 Տե՛ս նույն տեղում, էջ 181-182:

71 Նույն տեղում, էջ 182:

ու կյանքում ցանկասիրության թագավորության որչափ մեծանալը բանդմամբ, նույնչափ և սիրո թագավորության⁷²:

Սուրբ Գրոց իմաստության բանահատության ու մեկնորոշման համար, արդարև, հիմնարար, առանցքային ու նշանակետային նշանակություն ունի Աստծո ու մերձավորի նկատմամբ հոգևոր երկմիասնական սիրո պատվիրանը: Եվ այս առնչությամբ ճշտիմաց են ժամանակակից աստվածաբանական մեկնագիտական մտքի ուսումնասիրությանը նվիրված Ռ. Տոպպինգի, աստվածաշնչյան մեկնագետ Հ. Ֆրայի ու նաև Ռ. Տեսկեի հատկորոշումները՝ ս. Օգոստինոսի մեկնագիտական հայեցակարգի, աստվածասիրության ու մարդասիրության հոգևոր զույգ սիրո պատվիրանը հաստատագրելով որպես Աստվածաշունչ գրեթե ասացյալի հասկացման ու մեկնորոշման սկզբունք: Քանզի և սրբազան հայրն է այն դիտում մասնահատուկ՝ Սուրբ Գրոց այլաբանական իմաստի հասկացման համար, անշուշտ, բազմաբովանդակ ու ամբողջական իմաստը ևս լռելյայն նկատի ունենալով⁷³:

Սուրբ հայրը, որպես Սուրբ Գրոց **դիտավորություն** իմացահայտված վերոասացյալ մտքի բանաձևը վերստին ներանդրադարձելով ու վերակիրառելով Աստվածաշնչի նկատմամբ, ուսուցանում է Նրանում **իմաստության հասկացման ու մեկնորոշման** և այդ կերպ **Սուրբ Գրոց «իմաստության մեկնագիտության»** ուսումնասերին, որ պետք է չխռովվել ու չընկրկել Աստծո կամ սրբերի անունից հույժ խստությամբ ու սաստկությամբ սուրբ մատյանում ասվածից, այլ հարկ է մտածել, որ այն անհրաժեշտ է խորտակելու համար ցանկասիրության թագավորությունը: Եվ, ըստ ս. Օգոստինոսի, եթե այդ սաստիկ ու կտրուկ խստապահանջ խոսքը արտահայտված է պարզահայտ բառերով, ապա այն անտատամսելիորեն պետք է հասկանալ ուղիղ ու սեփական իմաստով, այլ ոչ թե այլաբանորեն: Վերոասացյալը կարելի է միաբերելով վերաձևակերպել որպես նրա «Սրբազան մեկնագիտության» հայեցակարգի հերթական **կանոն**:

Եթե Սուրբ Գրքում Աստծո կամ սրբերի անունից պայմանավորված մարդկային ինքնությունում ու կյանքում «ցանկասիրության» թագավորությունը խորտակելու անհրաժեշտությամբ, դիտավորյալ սաստիկ ու կտրուկ խստապահանջ խոսքն արտահայտված է պարզորոշ բառերով, ապա այն անտատամսելիորեն պետք է հասկանալ ուղիղ ու սեփական իմաստով, այլ ոչ թե այլաբանորեն:

72 Տե՛ս նույն տեղում:

73 Տե՛ս **Topping Richard R.**, *Frei Hans: The critical primacy of *sensus literalis* – Revelation, Scripture and Church: Theological Hermeneutics Thought of James Barr, Paul Ricoeur and Hans Frei*, Ashgate, England, էջ 203: Հոգևոր զույգ սիրո պատվիրանը որպես Աստվածաշունչ գրեթե ասացյալի հասկացման սկզբունք այլաբանական իմաստի հասկացման համար տե՛ս **Teske Roland J. (S.J.)**, *The criteria for figurative interpretation in St. Augustine – Teske Roland J. (S.J.)*, Augustine Hippo: Philosopher, exegete, and theologian, second collection of essays, Milwaukee, Marquette University Press, 2009, էջ 138:

6. Սուրբ Գրոց խորհրդապատումների՝ աստվածային սիրո կատարումի այլաբանությամբ մեկնորոշման կանոնները

Ս. Օգոստինոսն իր մեկնագիտական հայեցակարգում որպես **Սուրբ Գրոց իմաստության բանահասության ու մեկնորոշման կանոն** ամրագրում է նաև մեկ այլ մտքի բանաձև. **Սուրբ Գրքում Աստծուն կամ իրենց սրբությամբ գովյալ անձանց վերագրվող ամենայն խոսք ու գործողություն՝ անփորձառու մարդկանց թվացյալ անբարո, հարկ է հասկանալ այլաբանորեն և ասացյալի խորհրդանշանակությունը մեկնորոշել հոգևոր սիրո օգտին**⁷⁴:

Աստվածաշունչ մատյանում, իրոք, բազմիցս պատմվում են իրադարձություններ ու գործեր, որ և ուղղաբանող ընթերցմամբ կարող էին և հենց թվում են անբարո **աստվածային սիրո, կամքի ու իմաստության խորհրդապատում այլաբանող իսկությանը** ոչ վերահասու ու ոչ ներկրթյալ՝ անփորձառու անձանց: Եվ այդօրինակ պատմաեղբայրությունների, որոնց թվում և աստվածային նախախնամության ու հոգաձու տեսչության այլաբանող խորհրդիմացության մեկնուսույց ուսուցանությունն ու մարդկային վարքաբանության ներիմացություն ընձեռելով՝ որպես մեկնորոշման կանոնի նախապատրաստություն ս. Օգոստինոսը հայտորոշում է մարդկանց երկտեսակ վարքընտրությունը, որոնց և հասկացման ու մեկնորոշման անհրաժեշտության խնդրով կարող ենք առնչվել կյանքում ու հենց Աստվածաշնչում: «...Ով օգտվում է անցավոր իրերով մեծ կամ փոքր չափավորությամբ, քան թույլատրում ու պահանջում է մարդկային սովորույթը, որոնցում և նա ապրում է, նա կան գուսպ է կան սնտոխապաշտ է, իսկ ով օգտվում է իրերով այնպես, որ զանցառում է սովորականի սահմանները, որ և պահում են իրեն ժամանակակից բարի մարդիկ, նա կամ ինքն է ծառայում նշան որևոր խորհուրդի, կամ իրապես անբարոյական է: Քանզի նմանատիպ ամենայն դեպքերում մեղսալի է ոչ թե իրերի օգտագործումն ինքնին, այլ օգտագործողի ցանկասիրությունը»⁷⁵: Աստ սուրբ հայրը որպես վերոասացյալը մեկնորոշող օրինակ հիշատակում ու ընդգծում է հենց նպատակների այն տարբերությունը, որ և պարզորոշ նկատելի է երկու իրողությունների միջև. առաջինը՝ ըստ ավետարանական խորհրդապատումի՝ կնոջ կողմից Տիրոջ ոտքերի՝ յուղով օծման, որ և աստվածային նախախնամությամբ հատուկ նշան էր աստվածայինի ու մարգարեականի, և երկրորդը՝ ըստ սովորույթի՝ անզուսպ, շվայտ ու ցոփ անձանց ոտքերի

74 Свѣ Августин Блаженный, џվ. աշխ., էջ 184:

75 Նույն տեղում:

յուղման՝ մեզ խորշելի իրենց ճաշկերույթներում⁷⁶: Ահավասիկ «այն, ինչը, ի դեմս այլոց, մեծ մասամբ արգահատելի մի բան է, ի դեմս Աստվածության ու մարգարեականի, նշան է որևիցե հատուկի ու կարևորի»⁷⁷, որի և խորհրդանշանակությանը բանահասու ու նաև մեկնագոր ենք Սուրբ Գրոց խորհրդապատումների միմիայն «սիրո օգտին» խորընկալու վերահասությանը՝ ամենայնի նախախնամությունում ի վերուստ աստվածային սիրո և մարդկանց՝ առ Աստված ու առ մերձավոր երկմիասնական սիրո կատարումով: Ս. Օգոստինոսի մեկնուսույց միտքն աստ ամփոփելով՝ այն հավելող ու մեկնորոշող ձևակերպմամբ կարելի է ամրագրել հետևյալ մտքի բանաձևը. **օգտվում ենք ամենայնից առաքինությամբ ու ըստ պատշաճի՞, թե՞ չափազանց մոլությամբ՝ ըստ մեղքի ու արատի, հարկ է դատել ըստ օգտագործման դրդման ու դիտավորության**⁷⁸: «Իրերի օգտագործումը մեծ մասամբ այլատերվում է ոչ այլ ինչով, քան ցանկասիրությամբ, ըստ որի և մարդը ոչ միայն ամոթալիորեն չարարկում է իր համաքաղաքացիների սովորույթը, այլև, հաճախ այն սահմանազանցելով՝ բացահայտում է բովանդակ իր ներքին նողկալիությունը՝ մինչ այդ թաքնված համաժողովրդական սովորույթի քողածածկով»⁷⁹:

Այս ենթակետի սկզբում ամրագրված իր մեկնագիտական կանոնի առնչությամբ ս. Օգոստինոսը հիշատակում է Սուրբ Գրքում չդատապարտվող՝ Հին Ուխտի արդարների երբեմն բազմակնության եղելությունը՝ պայմանավորված, սակայն, ոչ նրանց սեռամոլ կրքերի անսասնությամբ, այլ, նրանց ժուժկալ՝ գուսպ ու չափավոր խորհրդով, բարքով ու վարքով հանդերձ, լոկ որդեծնության ու սերունդների բավարար քանակի խնդրով, որ և ներկայում այլ կերպ հնարավոր չէ, քան միայն մարմնական սիրատենչության տոփալի կրքով⁸⁰: Սրբազան հայրը Սուրբ Գրոց իմաստությունից, ի ներկրթություն ամենայն ուսումնասերի ներանձնականի և ապա ընդօրինակության արդեն նաև կենսակերպի, կանոնադրում է խրատուսույց մտքի մի բանաձև ևս. **անհարկի է մտածել, թե Հին Ուխտի իմաստապատումներում ուղղաբանորեն կամ այլաբանորեն պատմյալ որևոր գործելակերպեր, որ և այնժամայն կացությամբ անբարոյական ու հանցալի չէին, կարելի է իբրև թե գործածության մեջ դնել ներկայում ևս, որ և միայն կրքերով ներկայանքվածությամբ ու ցանկասեր մոլությամբ առլեցուն ապերջանիկ անձանց ընտրությունը, դիտավորությունն ու վարքն է անիմաստությամբ իրեն պաշտպանություն ու արդարացում որոնող Սուրբ Գրքում, որի սիրո ու խրատուսույց իմաստության բուն կոչումն ու դիտավորությամբ**

76 Տե՛ս նույն տեղում:

77 Նույն տեղում, էջ 185:

78 Տե՛ս նույն տեղում, էջ 186:

79 Նույն տեղում, էջ 187:

80 Տե՛ս նույն տեղում, էջ 186:

յունն է ոչնչացնելու ցանկասիրությունն⁸¹ ու կրքամոլության կապանքա-
րար գորությունը՝ ազատելու մարդկային անձն ու նրա մեջ աստվածա-
տուր բարեգորությունը մեղքի չարագոր ներգործությունից ու կա-
պանքներից:

Ս. Օգոստինոս Երանելին վերոքննարկյալի առնչությամբ նաև ձևա-
կերպում է աստվածաշնչյան հարանման իմաստապատումների և կամ
խորհրդապատումների մեկնուսույց կանոն ու հենց մեկնագիտական մտքի
մի բանաձև ևս. «....Սուրբ Գրոց ամենայն հատվածները, որոնցում և ն-
կարագրվում է հարանման (բազմակնությանը – հավելանշումը՝ Ռ. Ք.)
որևէ բան ոչ միայն պատմականորեն և ուղղաբանորեն սեփական ի-
մաստով, այլև երբեմն այլաբանորեն և միգուցե մարգարեաբար, հարկ
է մեկնորոշել այնպես, որ ամենուր վերնանպատակը լինի սերը առ
Աստված և առ մերձավոր կամ երկուստեք միասնաբար»⁸²:

Ինչպես և արձանագրում է սուրբ հայրը, երբեմն մարդիկ, անիմա ար-
դարների բարքերին ու նրանց ժամանակի սովորույթներին, ընթերցելով
նրանց գործունեությունը նկարագրող ուղղաբանող կամ այլաբանող
խորհրդապատումները, դատապարտելի կարող էին համարել դրանք, եթե
միայն նրանց արդարության ու սրբության հեղինակությունը չգսպեր իրենց
միտքն այդ կերպ եզրակացնող գնահատականից: Այնինչ իրենց աննկատ՝
սեփական բարքերում, սովորույթներում ու վարքում՝ ամուսնության, հա-
գուստի ու կենցաղավարության այլևայլ տարադեպերում, այլք ու այլ ժա-
մանակում ևս կգտնեին դատապարտելի բազում խորհուրդներ ու արարք-
ներ: Եվ պե՛տք է արդյոք համաձայնել իրենց կյանքում հիմնարկության խո-
րին քնի անձնատուրներին անլսելի՝ նրանցից փոքր-ինչ տարբերվող և,
սակայն, արդարների արթնությունից հեռու կիսաքուն անձանց թերամիտ
ու նաև թյուրամիտ այն եզրակացությանը, թե «իր մեջ ինքնին արդար չկա
և ոչինչ, այլ ամենայն ժողովուրդ սեփական սովորույթներն է համարում
արդար, և եթե ժողովուրդների սովորույթները տարբեր են, իսկ արդա-
րությունը հարկ է լինի անփոփոխ ու միատեսակ, ապա պարզահայտ է, որ
չկա ուրևիցե արդարություն»⁸³: Ըստ Օգոստինոսի՝ այդ տեսակ կարճա-
մտությունը խտտանելով ու ամոթարկելով՝ բավ է միայն հիշատակել, որ
ժողովուրդների տարատեսակ սովորույթների պարագայում անգամ ան-
փոփոխ ու համընդհանուր է ոսկե կանոնը, ըստ որի և՛ «այն, ինչը չես կա-
մենում քեզ, մի՛ արա և ուրիշին»: Եվ, ըստ սրբազան հոր, **յուրաքանչյուր
ոք, ոսկե այս կանոնն առնչելով իր՝ առ Աստված սիրուն, կմեռցնի ա-
մենայն չարություն, իսկ առնչելով իր՝ առ մերձավոր սիրուն՝ կմեռցնի**

81 Տե՛ս նույն տեղում, էջ 193:

82 Նույն տեղում, էջ 187:

83 Նույն տեղում, էջ 188-189:

և ամենայն հանցագործություն⁸⁴: Ջորջինակ՝ ոչ ոք չի կամենում պղծել իր կացարանը, հետևաբար և յուրաքանչյուրին է անհարկի պղծել Աստծո տաճար հանդիսացող իր անձը, և ոչ ոք չի կամենում, որ իրեն այլ ոք վնասի, հետևաբար և յուրաքանչյուրին է անհարկի վնասել ուրիշի⁸⁵: Աստ ս. Օգոստինոսը ձևակերպում է Սուրբ Գրքում արդարոց վարքին առնչվող խորհրդապատումների բովանդակ ընդհանրությանը վերաբերող՝ բանահասության ու մեկնորոշման հերթական հատուկ մի կանոն ևս.

սրբությամբ գովելի մեծանուն ու բարեպաշտ այրերի արարքներում, ըստ մարդկանց սովորությունների, որոնց միջավայրում և կենում էին, ըստ անհրաժեշտության կամ պարտավորության, հարկ է խորհրդածել բարենպաստակություն՝ հոգուտ իրենց կամ որպես բարեգործություն այլոց, ուղղաբանությամբ, որպես և մեզ պարտ է գործել, այլաբանությամբ, որպես և վերատուր է մարգարեներին⁸⁶:

7. Նախնյաց բարեվարքի հոգևոր մեկնորոշման հատուկ կանոնը՝ ապագայի նախակերպար իր խորհրդանշանակությամբ և ոչ ուղղաբանորեն՝ կենսախրատ իր կիրառությամբ

Ըստ հին ու նոր սովորությունների կամ ըստ հոգևոր սիրո՝ անկիրք ու առաքինի չափավորության, որին և հակոտնյա մարմնական սիրո՝ կրքերով առլեցուն ու մոլի ցանկասիրության դիտավորության, Հին Ուխտի անձանց գործերի հասկացումն ու մեկնորոշումը, ինչպես նաև ընթերցողի կյանքի ներկա պահին խրատուսույց ու կիրառունակ նշանակությունը հստակամտորեն տարբերակելով, ս. Օգոստինոսը բանաձևում է իր մեկնագիտության ընդհանուր ու կից, նաև հերթական հատուկ կանոնը.

Սուրբ Գրքում Հին Ուխտի գրեթե ամենայն մարդկային գործերի խորհրդապատումները հարկ է ընկալել ոչ միայն ուղղաբանորեն, այլև այլաբանորեն: Իսկ երբ հին ուխտացյալների բարեվարքը՝ Սուրբ Գրքում ուղղաբանորեն նկարագրված հոգեպարար խորհրդանշանակությամբ, անհարիր է բարեպաշտ քրիստոնյաների՝ Փրկչի գալստյամբ աստվածային պատվիրանները կատարող բարեվարքին, հարկ է այն ընկալել որպես նախակերպար՝ ինքնին այդ գործողությունը կամ վարքը չդարձնե-

84 Տե՛ս նույն տեղում, էջ 189: Հմմտ. նաև լատիներենին զուգահեռ անգլերեն թարգմանության հետ՝ Augustine, De Doctrina Christiana (On Christian Teaching), ed. and trans. by R.P. H. Green, New York, Clarendon Press.Oxford University Press, 1995, էջ 154-155 (գիրք երրորդ, հատ. 53):

85 Տե՛ս Августин Блаженный, նշվ. աշխ., էջ 189:

86 Տե՛ս նույն տեղում, էջ 187-188: Հմմտ. նաև լատիներենին զուգահեռ անգլերեն թարգմանության հետ՝ Augustine, De Doctrina Christiana (On Christian Teaching), ed. and trans. by R.P. H. Green, New York, Clarendon Press.Oxford University Press, 1995, էջ 154-155 (գիրք երրորդ, հատ. 50):

լով ներկա ժամանակի կանոն: Քանզի այն, ինչը հնում լինում էր երբեմն նույնիսկ ըստ պարտքի, այժմ անկարելի է, որ լինի առանց կրքի⁸⁷:

Ըստ ս. Օգոստինոսի՝ եթե անգամ Սուրբ Գրքում նկատվում են մեծերի մեղքեր, և ընթերցողը կարողունակ է այդ խորհրդապատումներում բացահայտելու նախակերպարումն ապագայի, այնուամենայնիվ, անարդար այդ գործերի ուղղաբանող խորհրդանշանակությամբ տեսնելով նույնիսկ մեծերի փոթորկումը, որից հարկ է զգուշանալ, և նավաբեկությունը, որ և հարկ է սգալ, հարկ է խրատահասու լինել՝ երբեք չխրոխտանալ սեփական գործերի արդարությամբ և քամահրանքով վերաբերվել այլոց՝ որպես մեղսագործների⁸⁸: Սուրբ հայրը գրում է, որ Աստվածաշունչ մատյանում ամեննին պատահական չեն մեծերի մեղանչումներ նկարագրող խորհրդապատումները, այլ խրատուսույց օրինակներ են՝ մշտապես ու ներքին դողով հիշելու առաքելական խոսքը՝ «Այսուհետև որ համարիցի հաստատուն կալ՝ զգոյշ լիցի, գուցէ անկանիցի» (Կորնթ., Ա, Ժ, 12): Եվ աստ սուրբ հայրը մեկնորոշում և Սուրբ Գրոց իմաստության ամենայն ընթերցասեր ուսումնասիրողների ու բարին կենագործել փափագողների բանահասությանն է մատուցում Աստվածաշնչի գրեթե ամենայն էջերից խրատուսույց ներշնչանքն ամենքին, որ «**Աստված հպարտներին հակառակ է, իսկ խոնարհներին տալիս է շնորհ**»⁸⁹:

8. Մերձավորի նկատմամբ բարու դրվատման ու չարի նշավակման **ուղղաբանող** և հակադարձի՝ բարու նշավակման ու չարի դրվատման **այլաբանող**՝ վերին խորհրդանշանակությամբ մեկնորոշման կանոնը

Ս. Օգոստինոսի «Սրբազան մեկնագիտությունում» ձևակերպվում է համընդհանուր մեկնուսույց կանոն Սուրբ Գրոց ամենայն պատվիրանների՝ խրատուսույց ասույթների առնչությամբ ևս. **եթե Սուրբ Գրոց որևիցե ասույթ բովանդակում է պատվիրան՝ նշավակող անառակություն կամ չարագործություն, կամ ուսուցանում բարեպիտոյություն և բարեգործություն մերձավորներին, հարկ է այն ընկալել ուղղակի ու սեփական իմաստով: Իսկ ամենայն ասույթ, որն իբրև թե պատվիրում է որևէ վատը կամ հանցալին և նշավակում է բարեգործությունը կամ ճշմարիտ հոգածությունն իր օգտին, հարկ է մեկնորոշել վերին խորհրդով**⁹⁰:

87 Տե՛ս Августин Блаженный, նշվ. աշխ., էջ 200:
88 Տե՛ս նույն տեղում:
89 Նույն տեղում, էջ 201:
90 Տե՛ս նույն տեղում, էջ 190:

Սուրբ հայրն այս կանոնը մեկնահայտող օրինակների թվում հիշատակում է տերունական խոսքն առ այն, թե «Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ եւ արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս: Որ ուտէ զմարմին իմ եւ ընկէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս, եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում» (Հովհ., Զ, 54-55): Քրիստոսի պատվերից ուղղաբանող իմաստով ընկալելով մարդկային բնականոն կենսառձից, ինչպես նաև բարոյականորեն առաքինի ու պարկեշտ խորհրդից, խոսքից ու գործից կարծես տրամագծորեն տարբերվող միայն անբնականն ու սարսափելին, ըստ Օգոստինոսի, իմաստության ուսումնասեր ամեն ոք տերունական այդ պատվերի ձշտիմացությամբ բանահասու ու մեկնորոշելու է կոչված ու կարողունակ միմիայն ասացյալի **վերին ու հոգևոր խորհրդանշանակությունը**⁹¹: Նույն կերպ և տերունական խոսքը, թե «Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ (կորուսցէ) զնա» (Հովհ., ԺԲ, 25), պետք է հասկանալ ոչ թե ուղղաբանորեն, որպես թե անձին արգելում է ինքնահոգածությունը՝ սիրել ու խնամել, հոգալ ու պահպանել իր հոգին, այլ այլաբանող խորհրդանշանակությամբ, թե յուրաքանչյուրին պարտ է թողնել ու վերափոխել հոգու ներկա գործելակերպը՝ սխալական ու մարմնական, երբ հոգին կապվելով ժամանակավորին ու անցավորին, չի որոնում հոգևորն ու հավերժականը⁹²:

Ամփոփում

Սուրբ Գրքում պատմյալ աստվածային իմաստության խորհրդիմացության մեկնուսույց օգոստինոսյան կանոններում, ընդ որում և՛ Աստծուն, սուրբ մարգարեներին կամ սրբությամբ գովյալ անձանց՝ ոչ փորձառու ու ոչ խորհրդիմաց անձանց անբարո թվացյալ ամենայն խորհուրդի, խոսքի ու գործի՝ միմիայն «սիրո օգտին» բանահասության ու մեկնորոշման վերաբերյալ հատուկ կանոնում ու նաև վերոշարադրյալ այլ կանոններում, ըստ իս, ներբովանդակյալ ու հայտորոշելի է ունիվերսալ մի հիմնականոն:

Պատմանեղանակում ու բուն պատմյալում ամենայն աստվածայինը հարկ է հասկանալ ու մեկնորոշել աստվածային սիրո կատարումի հայեցակետից՝ ուղղաբանող և կամ այլաբանող խորհրդանշանակությամբ:

Սուրբ Գրի աստվածային իմաստությանը վերա- ու խորահասու լինելու և այն մեկնորոշելու այս հիմնականոնը ներմիասնական ու առավել բացորոշ վերաձևակերպելի է մեկնուսույց կանոն ներկայացող մտքի բանաձևի այլ տարբերակով ևս. **աստվածաշնչյան խորհրդապատում ամենայն պատմանեղելությունների որպես այդպիսին լինելությունը, այդ թվում**

91 Տե՛ս նույն տեղում:

92 Տե՛ս նույն տեղում, էջ 191-192:

և՛ ներկերպավորյալ աստվածային նախախնամության իմաստության խորհուրդները, հարկ է հասկանալ ու մեկնորոշել միմիայն աստվածային սիրո համարվանդակ իսկության՝ որպես մեկնակետի ու կատարումի հայեցակետից՝ ուղղաբանող և կամ այլաբանող խորհրդանշանակությամբ:

Սուրբ Գրոց իմաստության՝ մեկնողաբար բացորոշմամբ վերո- հայտնյալ օգոստինոսյան մեկնուսույց հիմնականոններում, հատուկ կանոններում ու ամբողջական մեկնագիտական հայեցակարգում ներբովանդակվող և առ ուսումնասություն ու ներկրթություն անձանց խորհրդաբանվող սերն է այն «բանալին», որով և Սուրբ Գիրքը «բաց» է իմաստության ձգտող ընթերցասեր ու ուսումնասեր ամենքին և «բացում» է նաև նրանց հոգևոր կարողությունը՝ բանական միտքն ու հոգին, իմաստության վերո խորընկալունակության, բանահասության ու մեկնորոշման: Արդ՝ ս. Օգոստինոսի «Սրբազան մեկնագիտության» հայեցակարգից ուսյալ, ըստ իս, կարելի է եզրակացնել ու որպես Սուրբ Գրոց իմաստության բանահասության ու մեկնորոշման հիմնականոն ձևակերպել մեկնուսույց համընդհանուր մտքի ևս մի բանաձև. **Սուրբ Գրքում չի պատմվում և ոչինչ՝ բացի Աստծո՝ առ մարդիկ և մարդկանց՝ առ Աստված ու առ մերձավոր համարվանդակ հոգևոր սիրո ու այդ սիրուց բխող տեսագործնական իմաստության ու բարերար կամքի կատարումից, դիտավորությունից, ըստ այդմ՝ կերպարանումից ու կենսագործումից:**

Աստվածաշնչյան ամենայն խորհրդապատում հարկ է հասկանալ ու մեկնորոշել՝ մեկնակետ ու կատարում ունենալով **աստվածային սիրո, կամքի ու տեսագործնական իմաստության՝ որպես և ամենայն բարյաց խորհրդիմացությունը**, որով և մարդկային բանական հոգու, մտքի ու կամքի ներկրթությունն ու մարդկային փոխներգործուն կյանքում կենսագործունը՝ ըստ մարդկային կարողության:

Ռոմիկ Խ. Քոչարյան – հեղինակ է 5 մենագրության և 50-ից ավելի գիտական հոդվածի: Հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հերմենևտիկայի տեսությունը, պատմությունն ու կիրառությունը, տեսական և գործնական փիլիսոփայությունը, պատմության փիլիսոփայությունը, կրթության փիլիսոփայությունը, միջնադարագիտությունը, աստվածաբանությունը, սոցիոլոգիայի պատմությունը, տեսությունն ու մեթոդաբանությունը:

Էլ հասցե՝ kocharyan.romik@mail.ru

Summary

INTERPRETATION OF THE PRINCIPLES AND METHODS OF IDENTIFYING AMBIGUITIES: DIRECT AND ALLEGORICAL MEANING OF THE HOLY SCRIPTURES

In the hermeneutics of St. Augustine

Romik Kh. Kocharyan

Candidate of Sciences in Philosophy

Key words - “Sacred Hermeneutics”, “St. Scripture”, understanding, interpretation, allegory, rules of interpretation, science, conception.

The calling and fulfillment of St. Augustine’s “Sacred Hermeneutics” is to become and improve as an intra-holistic science teaching, revealing its own foundation and goal-setting, an explicating order of rules that formulate the possibilities of reliable understanding and interpretation of the wisdom of Holy Scripture. In his treatise “Christian Science” he presents a general, therefore, and teaching interpretation scientific concept of understanding and interpretation of the wisdom of Holy Scripture. His concept of hermeneutics can be presented as a general scientific concept teaching the interpretation of the wisdom of Holy Scripture, if it is purposeful and capable of reaching and interpreting **the divine** spoken in the Bible, which is mentally seen and accomplished in his hermeneutic treatise. According to his teaching, **“Sacred Hermeneutics” is a scientific concept of understanding and interpretation of the sacrament of wisdom, revealing the truth of the truly divine, contained in the sense- and/or counsel-stories of by God inspired sacred writings.** And summarizing, it can be stated that **“Sacred Hermeneutics” is the science of counsel-knowledge of understanding and interpretation of the wisdom revealing the “divine” in the all-being.** In his hermeneutic concept, St. Augustine formulated the order and system of rules of understanding and interpretation of the wisdom contained in the Holy Scripture: both the fundamental principles and **general rules**, and **special rules**. Initially, he explores the problem of knowledge and the means necessary to understand direct phrases and collocations, and then formulates general and specific rules for understanding and interpreting allegory. According to St. Augustine, any ambiguity is signified by a direct or allegorical meaning of words, phrases and collocations. The interpretation of the direct meaning and counsel of

the wisdom of Holy Scripture should be interpreted from the point of view of the interconnectedness of the parts to the formation of sense, the law of faith, the goal- and whole-forming interconnection of the context. According to his hermeneutic teaching, in the complex problem of interpreting of the wisdom of Holy Scripture, twofold of the direct meaning, it is also necessary to comprehend the allegorical wisdom's counsel-knowledge. Directness and ambiguity should be identified in accordance with the intent of the Holy Scriptures teaching morality. And St. Augustine formulates the rules of interpretation in accordance with the fundamental intention and accomplishment of the Holy Scriptures: by the elimination of "lust" in people's thoughts, souls and life - to achieve an increase in "love".

Резюме

ИНТЕРПРЕТАЦИЯ ПРИНЦИПОВ И МЕТОДОВ ИДЕНТИФИКАЦИИ ДВУЗНАЧНОСТЕЙ СВЯЩЕННОГО ПИСАНИЯ: ПРЯМОЗНАЧНОСТИ И ИНОЗНАЧНОСТИ

В герменевтике Св. Августина

Ромик Х. Кочарян
Канд. филос. наук

Ключевые слова – «Священная герменевтика», «Священное Писание», понимание, истолкование, иносказание, правила интерпретации, наука, концепция.

Призвание и свершение «Священной герменевтики» Св. Августина – становиться и совершенствоваться как внутрицелостное наукоучение, выявляющее собственное основоположение и целеполагание, эксплицирующий порядок правил, формулирующих возможности достоверного разумения (понимания) и интерпретации премудрости «Св. Писания». В своём трактате «Христианская наука» он представляет общую, следовательно и научающую интерпретацию научной концепции разумения и истолкования премудрости «Св. Писания». Его концепцию герменевтики правомочно представлять как научающую истолкованию премудрости «Св. Писания» общенаучная концепция, если она целеустремлена и способна постичь и истолковать изречённое в Библии **божественное**, что узрено и свершено в его герменевтическом трактате. Согласно его учению, «Священная Герменевтика» – это научная

концепция понимания и толкования таинства премудрости, выявляющая истину подлинно божественного, содержащегося в смыслоказаниях и заветосказаниях всех боговдохновенных святописаний. И обобщая, можно констатировать, что «Священная герменевтика» – это наука тайнознания разума и истолкования во всеобщем подлинно «божественной» являющей премудрости. В своей герменевтической концепции Св. Августин сформулировал порядок и систему правил разума и интерпретации содержащейся в «Св. Писания» премудрости: и **основополагающие** принципы и общие правила, и **особые** (частные) правила. Первоначально он исследует проблему знания и средств, необходимых для понимания прямозначных словосочетаний и фраз, а затем формулирует общие и особые правила разума и истолкования аллегории. Согласно Св. Августину, всякая двусмысленность означает прямой или переносный смысл, то есть прямозначностью или инозначностью слов, словосочетаний и фраз. **Интерпретация прямого смысла и совета мудрости «Св. Писания» должна проводиться с точки зрения взаимосвязанности частей с смыслообразованием, законом веры и целообразующей взаимосвязью контекста.** Согласно его герменевтическому учению, в комплексной проблеме истолкования премудрости «Св. Писания» наряду с изречённой прямозначностью необходимо также постижение инозначного, аллегорического в тайнах знания премудрости. Прямозначность и инозначность следует идентифицировать в соответствии с замыслом «Св. Писания», учащего морали. Посему и правила интерпретации Св. Августин формулирует в соответствии с основополагающим намерением и свершением «Св. Писания»: **изничтожением «похоти» в людских думах, мыслях, душах и жизни – достичь увеличения «любви».**

REFERENCES

1. **Avgustin Blazhenyj**, *Xristianskaja nauka, ili osnovanija sv. Germenevtiki I cerkovnago krasnorechija*, Kiev, 1835 **(In Russian)**.
2. **Blass Fr.**, *Germenevtika I kritika*, Odessa, 1891 **(In Russian)**.
3. **Gadamer H.-G.**, *Istina I metod*, M., “Progress”, 1988 **(In Russian)**.
4. **Gutner G. B.**, *Filosofija jazyka, v 3-x chastjax*, ch. 3, M., Izd. URAO, 2001 **(In Russian)**.
5. **K’och’aryan R.**, “Iskut’yan hermenevtikayi” kayats’man nakhadryalnerē antik hermenevtikayi dits’apatum yev rats’ional nakhatmut’yunum, “P’ilisop’ayut’yunē ardi ashkharhum”, *gitazhoghovi nyut’er*, g. VII, Yer., “Limush”, 2017, ēj 17-31 **(In Armenian)**.
6. **K’och’aryan R.**, *Krt’ut’yun yev hermenevtika. Krt’ut’yun ar imastut’yun*, Yer., “Yevroprint”, 2018 **(In Armenian)**.
7. **K’och’aryan R.**, *Nshanneri hatkoroshumē yev anhayt nshanneri u nshanakut’yunneri banahasut’yan mijots’nerē S. Ōgostinosi “Srbazan hermenevtikayi” hayets’akargum*,

- “P’ilisop’ayut’yuně ardi ashkharhum”, gitakan hodvatsneri zhoghovatsu, g. X, Yer., “Yevroprint”, 2020, էջ 50-67 **(In Armenian)**.
8. **K’och’aryan Ք.**, Patmut’yuně yev hermenevtikan, Girk’ 1. Movses Khorenats’u patmagitakan hayets’akargě, Yer., “P’rint’info”, 2016 **(In Armenian)**.
 9. **K’och’aryan Ք.**, S. Ōgostinosi “Srbazan meknagitut’yan” hayets’akargum usumnasirut’yan yent’aka bovandak ararkayum yerkrord yev yerrord dasi ararkanerě, “P’ilisop’ayut’yuně ardi ashkharhum”, gitakan hodvatsneri zhoghovatsu, g. IX, Yer., “Yevroprint”, 2019, էջ 88-107 **(In Armenian)**.
 10. **K’och’aryan Ք.**, S. Ōgostinosi “Srbazan meknagitut’yan” usumnasirut’yan arajnayin u geraguyn ararkan (Astvatsashnch’um Hakobi u Manvei harts’in hreshtaki pataskhani imastut’yan khorhurdi k’nna-hamematakan meknoroshmamb), “Ējmiatsin”, Yer., 2018, Zh, էջ 23-49 **(In Armenian)**.
 11. **K’och’aryan Ք.**, S. Ōgostinosi k’ristoneakan vardapetut’yunum Surb Grots’ haskats’umn u meknut’yuně`shnorh t’e gitut’yun, “P’ilisop’ayut’yuně ardi ashkharhum”, gitazhoghovi nyut’er, g. VIII, Yer., “Limush”, 2018, էջ 152-169 **(In Armenian)**.
 12. **K’och’aryan Ք.**, Siro 4 ararkanerě S. Ōgostinosi “Srbazan meknagitut’yan” hayets’akargum, “Hay hasarakut’yan zargats’man himnakhndimerě ardi zhamanakashrjanum. martahravernerě yev nrants’ lutsummerě”, gitakan hodvatsneri zhoghovatsu, Yer., “Yevroprint”, 2019, էջ 68-83 **(In Armenian)**.
 13. **K’och’aryan Ք.**, “Imastut’yan hermenevtikan” amenayn gitut’yan yev p’ilisop’ayut’yan himnorosh u hamēndhanur met’odabanakan hayets’akarg, “Ardiakanut’yan martahravernerě. p’ilisop’ayakan yev hogeabanakan himnakhndimerě”, mijazgayin gitazhoghovi nyut’eri zhoghovatsu, Yer., YEPH hrat., 2014, էջ 18-21 **(In Armenian)**.
 14. **Origen**, O nachalax, Novosibirsk, 1993 **(In Russian)**.
 15. **Savrej V. Ja.**, Aleksandrijskaja shkola v istorii filosofsko-bogoslovskoj mysli, M., “KomKniga”, 2011 **(In Russian)**.
 16. **Shpet G.**, Germenevtika I jejo problemy, “Kontekst”, M., 1989, էջ 231-268 **(In Russian)**.
 17. **Zhil’son E.**, Filosofija v srednije veka, M., “Kul’turnaja revoljucija, Respublika”, 2010 **(In Russian)**.